# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

355.51
Կ - 35

ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԳԼՈՒԽ III

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՌԱԶՄՀՐԱՏ ԲԱԺԻՆ

Ե Ր Ե Վ Ա Ն 1932

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԳԼՈՒԽ III

## ՄԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

37227

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1932

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

20 MAY 2013

# ՄԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

## ՍԱՀՄԱՆՆԵՐԸ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԽՍՀՄ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իմպերիալիստների կողմից Խորհրդային Միության դեմ պատերազմի պատրաստության գործում, չափազանց կարևոր տեղ է հատկացված մեր արևմտյան հարևաններին,—Լեհաստանին, Ռումինիային ու Մերձբալթյան պետություններին՝ Ֆինլանդիային, Եստոնիային ու Լատվիային:

Այդ բոլոր պետությունները դասավորված են ԽՍՀՄ ու բուրժուական Յեվրոպայի և միջև քաղաքական ու ռազմական մի պատնեշ են կազմում, որն անջատում է սոցիալիզմի երկիրը Յեվրոպայի կապիտալիստական խոշորագույն երկրներից ու նրանց հեղափոխական պրոլետարիատից: Այդպիսի դասավորությունն իմպերիալիստների համար մեծ արժեք ունի նաև զուտ ռազմական տեսակետից. այդ պետությունների տերիտորիայից կարող են սպառնալ մեր Միության կարևորագույն կենսական կենտրոններին ու ռայոններին՝ Լենինգրադին, Դնեպրոստրոյին, Խորհրդային Ուկրայինային, Դոնբասին:

Վերջապես՝ կարևորն այն է, որ այդ բոլոր պետություններում իշխանության գլուխ է կանգնած բուրժուազիան, որը, ինչպես և աշխարհի ամբողջ բուրժուազիան, դասակարգային ատելություն է տածում դեպի հեղափոխությունն ու դեպի Խորհրդային հասարակակարգը:

ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստության ընթացքը ցույց է տալիս, որ մեր դեմ ռազմական գործողությունների համար պատրաստվում են առաջին հերթին մեր արևմտյան հարևան պետությունները: Սակայն նրանք իրենք բավականաչափ ուժեղ չեն մեր դեմ ինքնուրույն պայքար մղելու համար: Նրանք, բոլորը միասին վերցրած՝ ունեն ընդամենը 58 միլիոն բնակիչ, այսինքն՝ ԽՍՀՄ բնակչությունից երեք անգամ պակաս: Իր տնտեսական ուժով բոլոր այդ պետությունների միությունը նույնպես յետ է մնում մեզանից և դեռ շատ ավելի յետ կմնա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ու մեր սոցիալիստական տնտեսության աճման հետևանքով: Դրա համար էլ նրանք պատրաստվում են պատերազմել մեր դեմ խոշոր իմպերիալիստական պետությունների աջակցությամբ և իրար հետ դաշնակցած: Այդ նպատակով կնքված են մի շարք ռազմական դաշինքներ ու պայմանագրեր: Լեհաստանը ռազմաքաղաքական պայմանագրով կապված է Ռումինիայի, Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի ու Մերձբալթյան երկրների հետ. Ռումինիան՝ Ֆրանսիայի ու Լեհաստանի հետ, իսկ Մերձբալթյան պետությունները

կապված են ռազմական դաշնագրերով միմյանց հետ և բոլորը միասին՝ Լեհաստանի հետ։

ԼԵՀ-ՌՈՒՄԻՆԱԿԱՆ պայմանագիրը, որը վերակնքված է 1931 թվի հունվարի սկզբներին, ուղղված է գլխավորապես ԽՍՀՄ դեմ։ Այդ պայմանագրում ասված է, որ այդ երկու պետությունները պարտավորվում են միասին կռվել արևելյան սահմանների վրա։ ԽՍՀՄ դեմ պատերազմի համար այդ երկու պետությունները պարտավորվում են դուրս բերել իրենց բոլոր ուժերի ամենապակասը $^{9}/_{10}$ մասը։

ԼԵՀ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ռազմական դաշինքը նախատեսում է, որ ԽՍՀՄ դեմ հարձակվելու դեպքում Ֆրանսիան պարտավոր է ապահովել լեհական բանակը ռազմական գույքով, օգնություն ցույց տալ նրան ռազմածովային նավատորմով։ Բացի դրանից, Ֆրանսիան լեհական բանակում նշանակում է իր «խորհրդատուներին» և ուղարկում է հրահանգիչներ։

1923 թվից մինչև 1929 թվի ժամանակամիջոցում Լեհաստանն ստացել է Ֆրանսիայից մոտ 200 հազար հրացան, 5 հազար գնդացիր, 1 հազար հրանոթ, 500 հազար արկ, 2 հազար սավառնակ և ավելի քան 250 տանկ։ Կոտորածի ու ոչնչացման այդ բոլոր միջոցների համար լեհ բանվորն ու գյուղացին պետք է հատուցեն իրենց արյունով։

ԼԵՀ-ՉԵԽՈՍԼՈՎԱԿՅԱՆ պայմանագիրը, որ ստորագրված է 1926 թվին նախատեսում է պատերազմի դեպքում Լեհաստան ուղարկվող բոլոր ռազմական իրերի ազատ փոխադրություն Չեխո-Սլովակիայի վրայով։ Ինքը—Չեխո-Սլովակիան, իր ուժեղ զարգացած ռազմական արդյունաբերությամբ պետք է լիանդով մատակարարի Լեհաստանին։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ նախատեսում է այդ պետությունների ու Լեհաստանի միատեղ ելույթը ԽՍՀՄ դեմ։ Լեհաստանը ռազմական տեսակետից առավելագույն չափով կապված է Եստոնիայի հետ։

ՖՐԱՆՍ-ՌՈՒՄԻՆԱԿԱՆ պայմանագիրը նախատեսում է Ռումինիայի մատակարարումը պատերազմի ժամանակ անհրաժեշտ ամբողջ հանդերձանքով ու սպառազինությամբ։

Այս բոլոր պայմանագրերն ու դաշինքները վկայում են այն մասին, որ մեր արևմտյան սահմաններում կազմվում է միասնական ճակատ, որին ընդգրկում է համարյա բոլոր սահմանամերձ պետությունները, բացառությամբ Լիտվայից։ Այդ մասին են վկայում նաև Լեհաստանի, Ռումինիայի ու Մերձբալթյան պետությունների գլխավոր շտաբների ներկայացուցիչների հաճախակի փոխադարձ այցելությունները։ Այդ բոլոր պետություններում շրջագայում են ֆրանսիական գլխավոր շտաբի սպաները, որոնք ճշտում են Խորհրդային Միության դեմ հարձակման պլանները։

Ֆրանսիայից ետ չեն մնում նաև անգլիական իմպերիալիստները։ Նրանք մեծ օգնություն են ցույց տալիս Մերձբալթյան պետությունների ռազմածովային նավատորմին, իսկ վերջերս անգլիական ծովային սպաներն ուժեղ կերպով աշխատում են զարգացնել ռումինական ծովային ուժերը։



# ԼԵՀԱՍՏԱՆ

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԽՍՀՄ

Մոտ հարյուր հիսուն տարի առաջ Լեհաստանը բաժանված էր ցարական Ռուսաստանի, Ավստրիայի ու Գերմանիայի միջև։ Այժմյան Լեհաստանը գոյացել է միայն 1918 թվի նոյեմբերին, նրանից հետո, երբ Հոկտեմբերյան հեղափոխությունը հռչակեց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի լոզունգը։ Լեհաստանի գոյացմանը զգալիորեն օգնեց նաև 1918 թվի հեղափոխությունը Գերմանիայում։

Լեհական բուրժուազիան, իշխանությունն իր ձեռքն առնելով,—իսկ այդ նրան հաջողվեց այն պատճառով, որ լեհական բանվոր դասակարգը սաստիկ թուլացել էր համաշխարհային պատերազմից ու լեհական սոցիալ-դեմոկրատների դավաճանությունից,—առաջին իսկ քայլերից իր հարվածն ուղղեց երիտասարդ Խորհրդային հանրապետության դեմ։ Նույն այդ ժամանակ ուկրաինացիների դեմ մղած երկամյա դաժան մարտերից հետո Լեհաստանն իրեն միացրեց ամբողջ Արևմտյան Ուկրաինան։ Վերջապես՝ 1920 թվին նա Լիտվայից գրավեց Վիլնայի մարզը, իսկ 1922 թվին Գերմանիայից խլեց Վերին Սիլեզիան, որը ներկայումս Լեհաստանի ամենահարուստ և արդյունաբերական ռայոնն է։ Բոլոր այդ զինված ընդհարումների ժամանակ և գլխավորապես Խորհուրդների դեմ մղած պատերազմում լեհական բուրժուազիային լայն օգնություն էին ցույց տալիս Ֆրանսիան և Անգլիան։։

Մեր փոխհարաբերությունների պատմությունը Լեհաստանի հետ լի է լեհական բուրժուազիայի թշնամական վերաբերմունքի ապացույցներով դեպի ԽՍՀՄ։

Լեհական բուրժուազիան ձգտում է ստեղծել «Մեծ Լեհաստան» ի հաշիվ Խորհրդային Ուկրաինայի, վերջինիս վիթխարի հարստություններով։ Լեհական կապիտալիստներին էին պատկանում առաջ Ուկրաինայում բազմաթիվ գործարաններ ու հանքեր։ Հենց Լեհաստանում գործարանների մի մասն աշխատում էր ուկրաինական հումույթով ու Դոնեցի վառելանյութով։ Մինչև համաշխարհային պատերազմը լեհական արդյունաբերությունն աշխատում էր գլխավորապես ռուսական շուկայի համար։ Լեհական կալվածատերերը նախահեղափոխական Ռուսաստանում տիրում էին 2,5 միլիոն հեկտար լավագույն սևահողի, որը տարեկան տալիս էր ամենապակասը 100 միլիոն ոսկե ռուբլի եկամուտ։ Տնտեսական այդ պատճառներն էին հրում Լեհաստանին պատերազմելու մեր դեմ։ Քաղաքական պատճառներ՝ Լեհաստանի բուրժուազիայի,—ինչպես և յուրաքանչյուր բուրժուազիայի ատելությունը դեպի ԽՍՀՄ։ Վերջապես՝ ԽՍՀՄ դեմ Լեհաստանին պատերազմի յեն դրդում ֆրանսիական ու անգլիական իմպերիալիստները։

Չափազանց շատ են լեհական բուրժուազիայի դեպի մեզ տածած թշնամական վերաբերմունքի ապացույցները։

1918—1920 թ.թ. լեհական ջոկատները մասնակցում էին սպիտակ գվարդիական բոլոր ճակատներում։ Արխանգելսկում գործում էր լեհական լեգիոներների հատուկ ջոկատը, Դենիկինի մոտ՝ գեներալ

Ժելիգովսկու դիվիզիան, Կոլչակի մոտ՝ գնդապետ Չումայի հետևակ դիվիզիան:

1920 թվի գարնանը Լեհաստանն արշավ սկսեց՝ նվաճելու համար Խորհրդային Ուկրաինան և մինչև իսկ ժամանակավորապես գրավեց Կիևը: Սակայն լեհական պաներին պատշաճ հակահարված տրվեց: Կարմիր բանակը յերևաց Լեհաստանի մայրաքաղաքի՝ Վարշավայի տակ և ստիպեց լեհական բուրժուազիային ժամանակավորապես հրաժարվել իր ծրագրից:

Մեզ հետ 1920 թվին հաշտության պայմանագիր կնքելուց հետո, Լեհաստանը կազմակերպում է իր տերիտորիայում ու զինում Պետլյուրայի, Սավինկովի, Տյուտյունիկի, Բուլակ-Բալախովիչի բանդաներին՝ խորհրդային յերկրի վրա հարձակվելու համար: Այդ բանդաների մնացորդները մինչև այժմ էլ վայելում են լեհական ֆաշիզմի հյուրասիրությունը, իսկ գեներալ Բուլակ-Բալախովիչը մինչև իսկ ռոճիկ է ստանում լեհական կառավարությունից:

Լեհաստանի հակախորհրդային գործունեությունն ուժեղացավ այն ժամանակվանից, յերբ 1926 թվին իշխանության գլուխ անցավ Պիլսուդսկին, վորը գլխավորում է լեհական բուրժուազիայի մեջ ամենաթշնամի մասին:

Լեհական թերթերն ամբողջ ժամանակ զոռում գոչում են այն մասին, վոր պետք է գրավեն Խորհրդային Ուկրաինան, զրպարտություններ են տարածում ԽՍՀՄ դեմ:

Լեհական կառավարությունը չափազանց համբերատար է դեպի Լեհաստանում ապաստան գտած ռուսական սպիտակ գվարդիականների այնպիսի լուրջ պրովոկացիոն գործողությունները, ինչպիսին եր Վարշավայի մեր լիազոր ներկայացուցիչ ընկ. Վոյկովի սպանությունը՝ 1927 թվին, Վարշավայի մեր առևտրական ներկայացուցիչ ընկ. Լիզարևի դեմ կատարված մահափորձը՝ 1928 թվին, Վարշավայի մեր լիազոր ներկայացուցչության շենքի պայթեցման պատրաստությունը՝ 1930 թվին:

Լեհական կառավարությունը շարունակ մերժում է բարի դրացիական հարաբերությունների մասին դաշնագիր ստորագրելու մեր առաջարկը և հրաժարվում է մեզ հետ սերտ առևտրական կապեր հաստատելուց:

Սկսած 1930 թվի աշնանից Լեհաստանը կազմակերպում է մի շարք խորհրդակցություններ, այսպես կոչված «ագրարային» կոնֆերանսներ՝ Ռումինիայի ու Մերձբալթյան պետությունների ներկայացուցիչների հետ, վորտեղ քննարկում են այն հարցը, թե ինչպես ձախողեն մեր արտաքին առևտուրը:

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանը գրավում է 388 հազար քառակուսի կիլոմետր տարածություն: Լեհաստանն Արևելքում սահմանակից է ԽՍՀՄ հետ 1.400 կիլոմետր յերկարությամբ. նա սահմանակից է Լատվիայի, Լիտվայի, Գերմանիայի հետ (1910 կիլոմետր) և Չեխո-Սլովակիայի ու Ռումինիայի հետ:

Լեհաստանի բնակչությունը հաշվվում է 31,5 միլիոն: Լեհաստանը բնակչության քանակով հինգ անգամ փոքր է ԽՍՀՄ-ից, բայց գերա-



զանցում է մեր արևմտյան հարևան պետություններին բոլորին միասին վերցրած: Լեհաստանի բնակչության 75%-ը գյուղական բնակչություն է (վորի թվում 20% բատրակ, 50,5% չքավոր ու միջակ, 2,5% կուլակ ու մանր կալվածատեր և 2 տոկոս խոշոր կալվածատեր):

Ազգային տեսակետից Լեհաստանը հեռու յե միատարր լինելուց: Լեհերն ամբողջ յերկրում կազմում են 60%, իսկ Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրաինայում նրանք բնակչության մի յերրորդ մասից էլ քիչ են:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանը գերազանցապես հողագործական (ագրարային) յերկիր է: Գյուղատնտեսությամբ զբաղված է բնակչության մինչև 70 տոկոսը: Գյուղացիների միլիոնավոր մասսաները հողի սուր կարիք են զգում, մինչդեռ կուլակությունն ու մի չնչին բուռ կալվածատերեր գրավել են հողի ամբողջ տարածության կեսից ավելին: Հողը բաշխված է այնպես, վոր 3 միլիոն 500 հազար ծուխից 20%-ը միանգամայն զուրկ է հողաբաժնից և ստիպված է բատրակություն անել կուլակների ու կալվածատերերի մոտ: Գյուղացիական տնտեսությունների 87 տոկոսի ձեռքում գտնվում է ամբողջ հողի միայն 32 տոկոսը: Չքավորի միջին հողաբաժինը հավասար է 2 հեկտարի, մինչդեռ մեկ կալվածատիրոջ միջին հաշվով ընկնում է 800 հեկտար: Հաճախ կարելի յե տեսնել այնտեղ կալվածատիրական տնտեսության տասնյակ հազարավոր հեկտար հողամաս:

1920 թվին, յերբ Կարմիր բանակը հաղթանակներ եր տանում, լեհական բուրժուազիան, վախենալով կործանումից, շտապ կարգով անցկացրեց այսպես կոչված «հողային ռեֆորմ»,—կալվածատիրական հողերը հարկադրական կարգով գյուղացիների օգտին հատկացնելու օրենքը: Այսպիսով բուրժուազիան կամենում եր իր կողմը գրավել սակավահող գյուղացիներին: Ինչպես և պետք եր սպասել, այդ վոչ մի կերպ չթեթևացրեց գյուղացիական ստորին խավերի դրությունը: Հողի համար նշանակած բարձր վճարը և սահմանափակումների շնորհիվ այդ օրենքն իրականում ծառայեց հարուստ գյուղացիների ու կուլակների օգտին, վորոնք գնում եյին նոր հողեր, ավելացնելով իրենց հողը: Այդ օրենքի շնորհիվ Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրաինայում զարգացան այսպես կոչված «օսադնիկների» ագարակները, այսինքն՝ նախկին սպաների ու ժանդարմների ագարակները, վորոնք հանդիսանում են՝ բելոռուսական և ուկրաինական գյուղացիության միլիոնավոր մասսաներին ստրկացրած բուրժուազիայի իշխանության հաստատուն հենարանը: Պատերազմի ժամանակ այդ «օսադնիկները» կօգտագործվեն տեղական բնակչության դեմ ժանդարմական հսկողության ու տեռորի համար: Ռեֆորմից առաջ էլ, հետո էլ, չքավորագույն գյուղացիությունը աղքատ դրության մեջ է ու քաղցում է:

Լեհաստանում ցանքատարածը հավասար է 13 միլիոն հեկտարի: Ամենագլխավոր մշակույթներն են՝ տարեկանը (ռաժը), վարսակը, ցորենը, գարին, կարտոֆիլը և շաքարի ճակնդեղը: Տեխնիկական մշակույթները (կտավատը, կանեփը և այլն) չնչին դեր են խաղում:

Տարեկանը (ռոժ) գրավում է ամբողջ ցանքի մոտ կեսը և կարևորագույն մշակույթն է հանդիսանում։ Տարեկանի մի տարվա բերքը հավասար է մոտավորապես 50 միլիոն կվինտալի (կվինտալը հավասար է 100 կիլոգրամի), և այստեղ Լեհաստանը բռնում է աշխարհում յերրորդ տեղը (ԽՍՀՄ ու Գերմանիայից հետո)։ Վարսակի տարեկան բերքն է մոտ 20—25 միլիոն կվինտալ։ Ցորենը ցանվում է առավելապես Լեհաստանի կենտրոնական շրջաններում և Արևմտյան Ուկրայինայում։ Ցորենի տարեկան բերքն է—մոտ 15 միլիոն կվինտալ։ Գարու տարեկան բերքն է—մոտ 13 միլիոն կվինտալ։

Լեհաստանի գյուղատնտեսության մեջ չափազանց մեծ տեղ է բռնում կարտոֆիլը։ Կարտոֆիլի ցանքերը գրավում են ցանքադաշտի 16%-ը, իսկ տարեկան բերքն է—մոտ 250 միլիոն կվինտալ։ Կարտոֆիլն ու տարեկանը կազմում են Լեհաստանի աշխատավորների գլխավոր սննդամթերքը։

Անասնաբուծությունը Լեհաստանում պատերազմի պատճառով սաստիկ ընկել էր, բայց հետո սկսեց աստիճանաբար վերականգնել։ Եկամտի մեծ աղբյուր է կազմում խոզաբուծությունը, վորը դրված է լավ հիմքերի վրա, մանավանդ Լեհաստանի արևմտյան մասում։

Լեհաստանում գյուղատնտեսությունն ընդհանրապես՝ բարձր մակարդակի վրա չէ,—դաշտերի բերքատվությունը 3—4 անգամ ավելի պակաս է, քան Գերմանիայում։

Ամենից շատ յետ է մնացել Արևմտյան Բելոռուսիայի ու Արևմտյան Ուկրայինայի գյուղատնտեսությունը։ Այստեղ ամենից շատ է զգացվում կուլակության ու կալվածատերերի ճնշումը, քանի վոր նրանց է այստեղ պատկանում հողերի մինչև 60 տոկոսը։ Բերքատվությունն այստեղ յերկու անգամ ավելի ցածր է, քան Լեհաստանի արևմտյան մասում։ Առանձին ռայոնները, ինչպես, օրինակ՝ Վիլնայի ու Պոլեսիայի «վոյեվոդստվոներում» (մարզերում) շարունակ նկատվում է անբերրիություն։ Ամեն տարի այդ ռայոններից հազարավոր գյուղացիներ մեկնում են ուրիշ յերկրներ, գլխավորապես՝ Ամերիկա աշխատանք վորոնելու։ Ներկայումս ամբողջ կապիտալիստական աշխարհում տիրող տնտեսական ճգնաժամի հետևանքով, այլ յերկրները մեկնելու ճանապարհները համարյա ամենուրեք փակ են, և ավելի յե սրվել սովն ու կարիքը։

1928 թվին Լեհաստանի գյուղատնտեսությունը մտավ ճգնաժամի շրջանը, վորն ամենից առավել չափով արտահայտվում է գյուղատնտեսական մթերքների գների չտեսնված անկումով։ Այսպես օրինակ՝ 1927 թվի համեմատությամբ 1932 թվի հունվարին ցորենի գինն ընկել է համարյա յերկու անգամ, իսկ տարեկանի գինը՝ յերեք անգամ։ 1931 թվի աշնան վերջում սկսվեց գյուղատնտեսական մթերքների գների ամենաուժեղ անկում։

Առաջ Լեհաստանը հաց էր արտահանում արտասահման։ Այժմ արտահանությունը կրճատվել է յերկու անգամ։ Ավելի քան յերկու անգամ կրճատվել է գյուղատնտեսական մեքենաների ներմուծումը։ 1930 թվից արդեն ցանքադաշտերը համեմատած 1929 թվի հետ կրճատվել է 10 տոկոսով։ Շատ տեղերում սկսել են վերադառնալ պապենական «յեռադաշտին»։

Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ մեջ տեղի յե ունենում սոցիալիստական



հիմունքներով գյուղատնտեսության հուժկու զարգացում, հարևան բուրժուական Լեհաստանում տեղի յե ունենում գյուղի քայքայում ու աղքատացում։

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանն ունի բավական զարգացած արդյունաբերություն, վորը հենվում է նավթի, քարածխի, յերկաթի և այլ հանքերի զգալի պաշարների վրա։ Լեռնարդյունահանման ու լեռնամշակման արդյունաբերությունը, վորտեղ առաջ աշխատում եյին 200 հազար բանվոր, կենտրոնացված է առավելապես Վերին Սիլեզիայում (Գերմանիայից խլած նահանգում)։ Այնտեղ արդյունահանվում է լեհական ամբողջ քարածխի 3/4, ձուլվում է չուգունի 4/5։ Այնտեղ ուժեղ զարգացած է նաև քիմիական ու ցինկի արդյունաբերությունը։ Նավթն արտահանվում է Արևմտյան Ուկրայինայի հարավային շերտում Դրոգոբիչում, Յուսլում և Ստանիսլավովում։

Տեքստիլ արդյունաբերության կենտրոնները, վորտեղ սովորաբար աշխատում է 180 հազար բանվոր, գտնվում են Լոձի ռայոնում ու Բելոստոկում։

Մետաղաձուլական արդյունաբերությունը գտնվում է Վարշավայի ռայոնում, շաքարի արդյունաբերությունը՝ Լեհաստանի արևմտյան մասում։ Մշակող արդյունաբերության մեջ մեծ դեր է խաղում օտարերկրյա կապիտալը։ Ֆրանսիացիներին պատկանում է քարածխային արդյունաբերության 40%, նավթի արդյունաբերության՝ 53%-ը, մետաղագործական արդյունաբերության 20%-ը և ցինկի արդյունաբերության 37%-ը։ Նորերս ֆրանսական «Շնեյդեր—Կրեզո» ռազմական ընկերությունը վարձակալության (արենդ) ստացավ Սիլեզիայից Գդինյա տանող ամբողջ յերկաթուղին (Գդինյան լեհական նոր ռազմական նավակայան է Բալթիկ ծովի վրա)։ Լեհական արդյունաբերության մեջ մեծ մասնակցություն ունեն ամերիկացիների ու անգլիացիների կապիտալները։ Պարզ է, վոր Լեհաստանը լիովին յենթարկված է խոշոր կապիտալիստական պետությունների շահերին։

1928 թվին, վորն առավելագույն «բարգավաճման» տարի յե հանդիսանում, լեհական արդյունաբերության արտադրանքը կազմել է նախապատերազմյանի 90 տոկոսը։ Քարածուխ արտահանված է յեղել 46 միլիոն տոնն, նավթ՝ 473 հազար տոնն, յերկաթահանք՝ 700 տոնն, չուգուն ձուլված է յեղել 705 հազար տոնն և պողպատ՝ 1 միլիոն 440 հազ. տոնն։ Այդ համեմատական հաջողությունը ձեռք է բերվել, շնորհիվ այն խոշոր փոխառության, վոր ստացվել է 1927 թվին Ամերիկայից և շնորհիվ 1926 թվի անգլիական ընդհանուր գործադուլի արդյունքների, յերբ Լեհաստանը ժամանակավորապես գրավեց քարածխային միքանի շուկա։ Բայց 1928 թվի վերջում սկսվեց տեքստիլ արդյունաբերության կանգառման առաջին նշանները, իսկ 1929 թվին արդեն արդյունաբերության բոլոր ճյուղերը բռնված եյին ճգնաժամով, վորը մինչև այժմ էլ շարունակում է խորանալ։ Քարածխի արդյունահանումը 1930 թվին կրճատվել է 20 տոկոսով, մեքենաշինարարության արտադրանքը՝ 30 տոկոսով, տեքստիլը՝ 15 տոկոսով, շինարարական արդյունաբերությունը կրճատ—

վել է յերկու անգամ, անտառանյութերի ու փայտամշակման արդյունաբերությունը՝ 25 տոկոսով, հանքայինը՝ 35 տոկոսով: 1931 թվի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքը նորից կրճատվել է 12—15 տոկոսով:

Միայն ռազմական արդյունաբերությունն է շարունակում աշխատել նախկին բեռնվածությամբ:

Չնայած ժողովրդական տնտեսության աղետավոր դրության, լեհական բուրժուազիան միջոցներ չի խնայում այնպիսի ֆաբրիկների ու գործարանների կառուցման համար, վորոնք աշխատում են գալիք պատերազմի շահերի համար: Վերջին տարիներս կառուցված է 6 փամփուշտա-արկային և 3 հրացանա-գնդացրային գործարան, 5 ավտոգործարան, 3 ավիամոտորային ու 2 ավտոմոբիլային գործարան: Լեհական արդյունաբերությունը կարող է ապահովել պատերազմի կարիքների 25—40 տոկոսը:

Սաստիկ զարգացել է քիմիական արդյունաբերությունը: 1930 թվի սկզբներում Տարնովայի ռայոնում բացված է մեծ քիմիական գործարան՝ 40 միլիոն ռուբլու արժողությամբ: Քիմիական գործարանների արտադրանքը՝ 1923 թվից մինչև 1929 թիվն ավելացել է 5—6 անգամ, սակայն այդ միայն այն նյութերի նկատմամբ, վորոնք անհրաժեշտ են պատերազմի համար: Պարարտանյութեր արտադրող քիմիական գործարաններն աշխատում են միայն իրենց ունակության կիսով չափ:

Լեհաստանի տնտեսության որինակով պարզ աչքի յե ընկնում այն հակասությունների սուր լինելը, թե ճգնաժամը վերջացել է, թե հնարավոր է ամրացնել կապիտալիստական տնտեսությունը: Լեհաստանն ունի բոլոր տվյալները իր տնտեսությունը բարձրացնելու համար (քարածխի, յերկաթի ու նավթի զգալի պաշարներ, բավականաչափ լավ հող, վորակյալ բանվորների բավական կադրեր), սակայն տնտեսության այդ վերելքը հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ բուրժուազիայի փոխարեն իշխանության գլուխ կանգնի լեհական բանվոր դասակարգը:

Արդյունաբերական և ագրարային ճգնաժամը, մասսաների աղքատացումը, ներքին շուկայի կրճատումը և կապիտալի արտահոսը դեպի արտասահման—այդ բոլորն ուժեղացրին վերջին ամիսներում ֆինանսական ճգնաժամը: Ֆինանսական ճգնաժամն առաջին հերթին արտահայտվեց պետական բյուջեյի դեֆիցիտի աճումով: Պիլսուդսկու կառավարությունը ձգտում է խուսափել սնանկությունից ի հաշիվ բանվորների ու ծառայողների լայն մասսաների աշխատավարձի իջեցման, փողոց շպրտելով տասնյակ հազար բանվորներ, աստիճանավորներ, քաղաքային ինքնավարությունների աշխատավորներ և կրճատելով գործազուրկների նպաստները: Ֆինանսական ցնցումները Գերմանիայում, Անգլիայում և այլ յերկրներում առաջացրին ֆինանսական ճգնաժամի հետագա սրումը Լեհաստանում: Ուժեղանում է կապիտալիստների արտահոսը դեպի արտասահման, հաճախանում են խոշոր բանկերի սնանկությունները, խիստ ընկնում է լեհական պետական ու մասնավոր արդյունաբերական արժեթղթերի գինը: Տնտեսական ճգնաժամը Լեհաստանում աղետաբեր չափեր է ընդունում:



## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուազիայի իշխանությունը, վորպես ծանր բեռ ընկած է քաղաքի ու գյուղի աշխատավորների ուսին: Արդյունաբերության մեջ յերկարացվում է բանվորական որը և կրճատվում է աշխատավարձը: Գյուղում ավելանում են հարկերն ու տուգանքները: Պետության յերեք միլիարդանոց բյուջեն իր ամբողջ ծանրությամբ ճնշում է բնակչության չքավորագույն խավերին:

Գործազրկությունը Լեհաստանում միշտ էլ շատ մեծ է յեղել, իսկ վերջերս (ճգնաժամի շրջանում) նա հասնում է չտեսնված չափերի: Այսպես, որինակ՝ 1931 թվի հունիսին յեղել է 500 հազար գործազուրկ: Յուրաքանչյուր յերկու բանվորից մեկը զուրկ է աշխատանքից: Ընտանիքների հետ միասին սովի յե մատնված 3 միլլիոն մարդ: Գործազրկության համար տրվող խղճուկ նպաստն ստանում է միայն 100 հազար հոգի:

Լեհական բանվորի աշխատավարձը չափազանց ցածր է: Բանվորի ընտանիքի միջին ապրուստի համար պահանջվում է որական 4—5 ռուբլի: Մինչդեռ բանվորները 1922 թվին միջին հաշվով որական ստացել են 69 կոպեկից մինչև 2 ռուբլի:

Ներկայումս հարձակում է տեղի ունենում բանվորների աշխատավարձի վրա, և այդ պատճառով աշխատավարձն անընդհատ նվազում է: Կանանց և դեռահասների աշխատավարձն ավելի քիչ է, քան տղամարդկանց աշխատավարձը:

Գյուղացիության դրությունը նույնպես ծանր է: Գյուղատնտեսական մթերքների գների անկումից տուժում է առաջին հերթին չքավորագույն գյուղացիությունը, վորը չի կարողանում սպասել վաճառքի համար ավելի լավ պայմանների և ստիպված է հացը վաճառել այն գնով, ինչ գին վոր տալիս են:

Հողաշինարարությունը կատարվում է այնպես, վոր լավագույն հողերը խլվում են չքավորներից և տրվում կուլակությանը:

Հատկապես ծանր է գյուղատնտեսական բանվորների դրությունը, վորոնց թիվը մոտ 3 միլլիոն է: Բատրակի աշխատավարձը կազմում է տարեկան միջին հաշվով 40 ռուբլի, իսկ վորովհետև մեծ մասամբ այդ աշխատավարձը վճարվում է բնամթերքով (տարեկանով—ռոժ), ապա դրա արժեքը փաստորեն է՛լ ավելի ցածր է: Բացի դրանից, գյուղատնտեսական բանվորները ծառայության մտնելով կալվածատիրոջ ու կուլակի մոտ, պարտավոր են աշխատել վոչ միայն իրենք, այլև հաճախ բերեն ձրի աշխատանքի իրենց կանանց ու յերեխաներին:

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Լեհական բուրժուազիան անխնա ճնշում է Արևմտյան Ուկրայինայի և Արևմտյան Բելոռուսիայի ուկրայինական ու բելոռուսական աշխատավոր բնակչությանը: Ուկրայինական հողերը բաժանում են լեհական սպաների ու յենթասպաների միջև: Հարկերն այստեղ 3—4 անգամ ավելի բարձր են, քան Լեհաստանի մնացած մասերում: Ամբողջ Բելոռուսիա-

յում լեհացիները կազմում են միայն 25 տոկոսը, իսկ Արևմտյան Ուկրայինայում նրանց թիվն է՝ 30 տոկոս:

Ազգային ճնշումն առանձնապես ուժեղ է արտահայտվում լեզվի ու դպրոցների բնագավառում: Պետական լեզուն հանդիսանում է միայն լեհականը: Ժողովրդական դպրոցները համարյա ամբողջովին գտնվում են լեհերի ձեռքում: Բնակչության մի հինգերորդ մասը կազմող լեհական բնակչությունը, Վիլնայի, Նովոգրուդկու, Պոլեսսիայի, Վոլինի, Տարնոպոլի, Ստանիսլավսկու և Լվովի մարզերում, շնորհիվ բուրժուազիայի ու կալվածատերերի քաղաքականության, իրենց ձեռքումն ունի բոլոր ժողովրդական դպրոցների 3 քառորդը: Այդ պատճառով ընիկ ազգաբնակչության մեջ անգրագետների թիվը չափազանց մեծ է, հասնելով 35—65 տոկոսի:

Նույնպիսի պանական ճնշում է նկատվում նաև ինքնավարության մարմիններում: Արևմտյան Բելոռուսիայում 32 տոկոս կազմող լեհ բնակչությունն իր ձեռքումն ունի ինքնավարության մեջ տեղերի 50 տոկոսը: Հասկանալի յե, վոր ինքնավարության մարմիններում նստած են վոչ թե աշխատավոր լեհերը, վորոնք ուկրայինական ու բելոռուսական աշխատավորների յեղբայրներն են; այլ լեհական կապիտալիստները, կալվածատերերն ու կուլակությունը:

Յեթե այդ բոլորին ավելացնենք նաև ուկրայինական ու բելոռուսական գյուղի հողազրկությունը, կալվածատերերի, կուլակների և «ոսադնիկների» սոսկալի ճնշումը, ապա պարզ կլինի, թե ինչո՞ւ գյուղացիությունը ժամանակ առ ժամանակ տարերայնորեն պայքար է սկսում: Հրդեհների ցոլքերը քանիցս արդեն լուսավորել ն Արևմտյան Ուկրայինայի տերիտորիան: Լեհական իշխանությունն ապստամբներին ճնշելու յի ուղարկում հեծելազոր, վոստիկանության հազարավոր ջոկատներ և ռազմաֆաշիստական խմբեր: Ուկրայինական բուրժուազիան, սարսափած հեղափոխության ուրվականից, ոգնում է պաներին :1930 թվի աշնանը մի քանի յերկար ու ձիգ շաբաթների ընթացքում պատժիչ ջոկատները մտրակներով, թրերով ու գնդակներով «հանդստացնում» եյին ուկրայինական գյուղերը: 1931 թվին մենք ականատես յեղանք ազգային-ագրարական շարժման մի նոր՝ լեհական բուրժուազիայի համար ահեղ, վերելքին:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՐՈՐԸ

Լեհական բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական շարժումն ունի հարուստ անցյալ: Բանվորների ու գյուղացիական մասսաների կյանքի ծանր պայմաններն ստիպում են փողոց դուրս գալու և ակտիվ մարտնչելու իրենց իրավունքների համար:

1923 թվի նոյեմբերին բանվորական մասսաները կազմակերպում են ընդհանուր գործադուլ, վորը բռնկեց ամբողջ յերկրում և ապա Կրակովի պրոլետարիատն սկսում է հուժկու զինված յելույթ, վորին մասնակցություն են ցույց տալիս նրա կողմն անցած զորքերը: Ապստամբությունը տապալվեց սոցիալ-դեմոկրատների, սոցիալ-ֆաշիստական ՊԵՊԵԵՍ-ի դավաճանությամբ:



1924 թվին Արևմտյան Բելոռուսիայում բռնկվում է գյուղացիական մասսաների պարտիզանական պայքարի հրդեհը:

Բանվորների հեղափոխական յելույթները 1925 թվի վերջում և 1926 թվի սկզբներում, Լոձի մանածագործների գործադուլը 1928 թվին, յերբ մի քանի շաբաթվա ընթացքում գործադուլ եյին արել Լոձի 100 հազարից ավելի բանվոր, Լվովի պրոլետարիատի յելույթը 1928 թվի նոյեմբերին 1-ին, վորը վերջացավ վոստիկանության կողմից բանվորների մասսայական ծեծով,—այս բոլորը վկայում են Լեհաստանի բանվորա-գյուղացիական մասսաների ակտիվ ու չմարող պայքարի մասին:

Սկսած 1929 թվի վերջից մինչև այժմ Լեհաստանի զանազան քաղաքներում համարյա ամեն օր տեղի յեն ունենում բանվորների, գործազուրկների ու նրանց կանանց յելույթները, վորոնք հաճախ անցնում են վոստիկանության դեմ արյունալի ընդհարումների:

Բանվորա-գյուղացիական մասսաների բոլոր խոշոր հեղափոխական մարտերը ղեկավարում են Լեհաստանի կոմկուսակցությունն ու Արևմտյան Ուկրայինայի և Արևմտյան Բելոռուսիայի յերկրայրական կազմակերպությունները:

Հեղափոխական շարժումն աճում է ու ծավալվում չնայած կառավարության ու նրա բոլոր վարձկանների վայրագ տերորին: Ֆաշիստական դիկտատուրան տերորը հասցրել է ծայրահեղ չափերի: Բանվորական ու գյուղացիական կազմակերպությունները յենթարկվում են ամենադաժան հալածանքների: Այդպես ջախջախված եր Բելոռուսական բանվորա-գյուղացիական Գրոմադան, վորն արտահայտում եր բելոռուսական գյուղացիական մասսաների շահերը:

Հեղափոխական բանվորների նկատմամբ տերորն իրագործվում է վոչ միայն պահնորդական բաժնի (ոխրանկայի) ու վոստիկանության, այլև սոցիալ-ֆաշիստական կուսակցության ՊԵՊԵԵՍ-ի միջոցով, վորն ունի իր մարտական խմբերը: Հատկապես հենց այդ խմբերի ոգնությամբ եր կազմակերպված արյունալի կոտորածը Վարշավայի փողոցներում 1928 թվի մայիսի 1-ին: Կոմունիստների ու հեղափոխական բանվորների սպանությունները միանգամայն անպատիժ են անցնում: Ծեծը լեհական պահնորդական բաժնում (դեֆենզիվում) ու բանտերում սովորական գործ է դարձել: Հայտնի յեն կալանավորված կոմունիստների գազանաբարո խոշտանգման դեպքեր Լուցկի բանտում, վորի հետևանքով մի քանի կալանավոր հաշմանդամ դարձան մինչև իրենց կյանքի վերջը: Յերբեք չեն մոռացվի պատժիչ արշավախմբերի «քաջագործությունները» Արևմտյան Ուկրայինայում 1930 թ. աշնանը: Ուկրայինական գյուղացիներին ծեծում եյին ամբողջ գյուղերով չմերկացրած գլխի համար (վորովհետև պատիվ տալու համար գլխարկները չեյին հանել), ուկրայիներեն խոսելու համար զինվորներին, վոստիկանության ու ձիերին ձրի կերակրելուց հրաժարվելու համար: Տասնյակ գյուղացիներ մեռան ճիպոտների տակ, հարյուրավոր գյուղացիներ գնդակահարվեցին, հազարավոր հոգի ձերբակալվեցին: Լեհական բանտերը լիքն են քաղաքական կալանավորներով: Հենց միայն ավելի քան 6 հազար կոմունիստ կա նստած բանտերում: Նորերս լեհական բուրժուազիան անցավ հեղափոխական շարժման ավելի գազանաբարո ճնշման: Մտցված են ռազմադաշտային դատարաններ, հանդես են բերվել կախաղաններ, լեհական

բանտերում քաղաքական կալանավորները հավասարեցված են քրեական հանցագործներին:

Ցեվ այնուամենայնիվ ավելի ու ավելի յե բարձրանում հեղափոխական ալիքը: Լեհաստանի աշխատավորները կոմկուսակցության ղեկավարությամբ իրենց առօրյա պահանջների համար մղած պայքարում քննում են դեպի իշխանության համար մղվելիք վճռական մարտերը:

Լեհաստանում կան բազմաթիվ քաղաքական կուսակցություններ, վորոնք տարբեր անուններ են կրում: Նրանք բոլորը կարող են միացվել յերկու հիմնական խմբակի — ֆաշիստական դիկտատուրայի կուսակցությունների խմբակ և հեղափոխական կուսակցությունների խմբակ, վորը բաղկացած է Լեհաստանի կոմկուսակցությունից (ԼԿԿ), Արեվմտյան Ուկրայինայի կոմկուսակցություն (ԱՈՒԿԿ) և Արեվմտյան Բելոռուսիայի կոմկուսակցություն (ԱԲԿԿ):

## ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆաշիստական դիկտատուրայի ամենագլխավոր կուսակցությունները հետևյալներն են.—

«Կառավարության հետ աշխատակցության անկուսակցական բլոկ»,—դա լեհական ֆաշիզմի կառավարական կուսակցությունն է, վոր կազմակերպել է Պիլսուդսկին 1927 թվին: Այդ կուսակցությունն արտահայտում է խոշոր արդյունաբերողների ու կալվածատերերի շահերը և աչքի յե ընկնում հատուկ թշնամությամբ դեպի ԽՍՀՄ:

«Սոցիալիստների լեհական կուսակցություն» (Պեպեես—ՊՊՍ),—ամենահին սոցիալ-դավաճանական կուսակցությունն է, վորը վաճառվել է ֆաշիզմին: «Հեղափոխական» խոսքեր է շռայլում, իսկ գործով ժխտում է դասակարգային պայքարը, դավաճանում է բանվորական գործադուլներին, պաշտպանում է Պիլսուդսկուն և հանդիսանում է ֆաշիստական գաղափարների հաղորդիչը, յետ պահելով բանվորներին հեղափոխական յելույթներից: Իր արտաքին քաղաքականության մեջ աչքի յե ընկնում ատելությամբ դեպի ԽՍՀՄ: Մտնում է 2-րդ Ինտերնացիոնալի կազմի մեջ և պատրաստակամությամբ ծառայում է լեհական, ֆրանսիական և անգլիական իմպերիալիզմի շահերին:

«Նացիոնալ դեմոկրատներ» («էնդեկներ»)—բուրժուազիայի հին կուսակցությունն է: Մինչև ինքնուրույն Լեհաստան կազմվելը արտահայտել է նախկին ռուսական Լեհաստանի խոշոր բուրժուազիայի շահերը: Ներկայումս էնդեկներն արտահայտում են միջին ու մանր բուրժուազիայի շահերը: Այդ կուսակցությունն ազդեցություն է վայելում բուրժուական ինտելիգենցիայի, բարձր սպայության այն մասի կողմից, վորին Պիլսուդսկին վտարել է բանակից: 1923-ից մինչև 1926 թվերի ժամանակաշրջանում էնդեկներն իշխանության գլուխ եյին անցել: Նրանք պայքարում եյին և պայքարում են բանվորական շարժման դեմ, կապիտալիստական հասարակակարգի ամրացման համար, հալածում են ազգային փոքրամասնություններին (ուկրայինացիներին, բելոռուսներին, հրեաներին): Արտաքին քաղաքականության բնագավառում էնդեկները կողմնակից են Ֆրանսիայի հետ ամենասերտ մերձեցման և ատում են խորհրդային հասարակակարգը:



«Քրիստոնեական դեմոկրատներ»—հենվում են հոգևորականության, քաղաքային մանր բուրժուազիայի և վոչ ինդուստրիալ պրոլետարիատի հետամնաց խավերի վրա, բանվորների մեջ քարոզում են դասակարգային խաղաղություն և իշխանությանը հնազանդում: Դեպի ԽՍՀՄ վերաբերում են գազանային թշնամությամբ:

Ֆաշիստական կուլակային կուսակցություններ՝ «Պյաստ», «Վիզվոլենիե» և «Ստրոննիցտվո խլոպսկե»,—բոլոր յերեք կուսակցություններն էլ արտահայտում են կուլակության շահերը: Ինչպես և Պեպեեսը, դրանք նույնպես ողնում են ֆաշիզմին, յետ պահելու գյուղացիական մասսաներին՝ կառավարության դեմ թշնամական յելույթներից: Ատում են ԽՍՀՄ, մանավանդ կոլեկտիվացման անցկացման համար: Նորերս այդ յերեք կուսակցությունները միացան ու կազմեցին մի կուսակցություն:

Ուկրայինական նացիոնալ-ֆաշիստական կուսակցություններ՝ Ուկրայինական ժողովրդական-դեմոկրատական միավորություն»—(ՈՒՆԴՈ)—ուկրայինական բուրժուազիայի կուսակցությունն է: Կուսակցության հենարանը կազմում են ինտելիգենցիան, հոգևորականությունը և ուկրայինական կուլակությունը: ՈՒՆԴՈ-ն իր ձեռքում է պահում ուկրայինական կոոպերատիվ ու կուլտուր-լուսավորական կազմակերպությունների մեծամասնությունը: Վերաբերմունքը դեպի ԽՍՀՄ թշնամական է: «Ուկրայինական ռադիկալ սոցիալիստական կուսակցություն» (ՈՒՌՍԿ)—յերբեմնի ազդեցություն ուներ Արեվմտյան Ուկրայինայում: Իր ծրագրով մոտ է ՈՒՆԴՈ-ին: Լիովին պաշտպանում է Պիլսուդսկուն:

«Ուկրայնական ժողովրդական միություն»—Պետլյուրովյան կազմակերպություն է, վորն աշխատում է բացառապես Վոլինում: Գտնվում է ֆաշիզմի ծառայության մեջ: Այդ կուսակցության ազդեցությունը չնչին է:

«Սելրոբ» (աջ): Մինչև 1928 թիվն այս կուսակցությունը հեղափոխական աշխատանք եր տանում ուկրայինական բանվորների ու գյուղացիների մեջ: 1928 թվին «Սելրոբը» պառակտվեց աջ ու ձախ մասերի: Աջ սելրոբը թեև թշնամաբար է վերաբերվում դեպի Լեհաստանը, բայց ֆաշիզմի համար մեծ վտանգ չի ներկայացնում:

Բելոռուսական նացիոնալ-ֆաշիստական կուսակցություններ: Կան յերկու փոքր կազմակերպություն՝ «Բելոռուսական սելյանական միություն» և «Բելոռուսական քրիստոնեյական դեմոկրատիա»: Այդ յերկու կազմակերպություններն էլ համաձայնողական քաղաքականություն են վարում լեհական ֆաշիզմի հետ և պայքարում են Խորհրդային Բելոռուսիայի ազդեցության դեմ:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեհաստանի կոմկուսակցությունը (ԼԿԿ) կազմվել է 1918 թվի դեկտեմբերին, իսկ մի յերկու շաբաթ անց ստիպված է յեղել անցնելու ընդհատակյա գործունեյության, վորպիսի դրության մեջ գտնվում է մինչև այժմ: Կուսակցությունը գլխավորում է հեղափոխական շարժումը: Դրա համար նա յենթարկվում է դաժան հալածանքի վոչ միայն կառավարության, այլև բոլոր սոցիալ-ֆաշիստական ու ազգային-ֆաշիստա-

կան կուսակցությունների կողմից: Կուսակցության անդամների մի մասը գտնվում է բանտերում ու տաժանակիր աշխատանքում: ԼԿԿ հիմնական լոզունգներն են՝ պայքար Լեհաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար և պայքար ընդդեմ ԽՍՀՄ դեմ պատերազմի: Ազգային հարցում ԼԿԿ կողմնակից է Արևմտյան Բելոռուսիայի ու Արևմտյան Ուկրայինայի Լեհաստանից անջատմանը և նրանց Խորհրդային Ուկրայինային ու Խորհրդային Բելոռուսիային միացմանը: Սեյմի ընտրություններում 1928 թվին ԼԿԿ հավաքեց մինչև 300 հազար ձայն:

Չնայած աշխատանքի բացառիկ ծանր պայմաններին, Լեհաստանի կոմկուսակցությունը միակ ուժն է, վորն իսկական պայքար է մղում ֆաշիզմի դեմ և մասսաներին կոչ է անում պայքարելու բուրժուազիայի դեմ:

ԱԲԿԿ և ԱՈւԿԿ հանդիսանում են ԼԿԿ յերկրամասային կազմակերպությունները: Նրանք հանդես են գալիս միասնական ճակատով: ԼԿԿ ղեկավարությամբ աշխատում է նույնպես Լեհաստանի կոմսոմոլը, բանվորա–գյուղացիական առաջավոր յերիտասարդության անլեգալ, բայց վերին աստիճանի մարտական կազմակերպությունը

## ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Մինչև 1926 թիվը բուրժուազիան իրագործում եր իր իշխանությունը «պարլամենտական դեմոկրատիայի» միջոցով: Այդ նշանակում է, վոր բուրժուազիան ամենազզվելի խաբեյության և վոստիկանական ճնշման միջոցով ապահովում եր իրեն համար ձայների մեծամասնություն օրենսդրական մարմիններում՝ սեյմում ու սենատում:

Դասակարգային պայքարի սրումը դրդեց բուրժուազիային գործադրելու աշխատավորների ճնշման ավելի բացահայտ ձևեր: 1926 թվին տնտեսական ճգնաժամի հետևանքով սաստիկ սրվեցին դասակարգային հակասությունները: Այն ժամանակ հանդես յեկավ մարշալ Պիլսուդսկին և բանակի վերնախավի ու սոցիալ–դավաճանների ոգնությամբ «հեղաշրջում» կատարեց, վորպեսզի փրկի կապիտալիզմի փլատակվող շենքը: Սուտ խոստումների քողի տակ սկսվեց ամբողջ պետական ապարատի վերակառուցումը, վորպեսզի այդ ապարատն ավելի հարմարեցվի հեղափոխական շարժման դեմ պայքարելուն և ավելի հարմար պարագա ստեղծվի նոր պատերազմի պատրաստության համար:

Դիկտատուրայի հինգ տարին ցույց տվեցին, վոր չնայած բոլոր ջանքերին ու սոցիալ–ֆաշիստների ոգնության, ֆաշիզմին չհաջողվեց կապիտալիստական տնտեսությունը դուրս բերել ճգնաժամից և ջախջախել հեղափոխական շարժումը յերկրում:

Լեհական ֆաշիզմն ուժգնորեն պատրաստվում է ԽՍՀՄ դեմ պատերազմի: Լեհաստանի պետական բյուջեյի կեսից ավելին ծախսվում է զինված ուժերի զարգացման համար: Տեղի յե ունենում պետական ամբողջ ապարատի ռազմականացում: Իշխանության բոլոր մարմիններում ստեղծված են ռազմական բաժիններ: Քաղաքացիական ապարատը հագեցված է սպաներով: Բնակչության ռազմականացման և մանավանդ ռազմա–ֆաշիստական միություններ ստեղծելու համար մեծ գումարներ են ծախսվում: Ռազմա–ֆաշիստական կազմակերպությունների թիվը հասնում է մոտ մեկ միլիոն անդամի:



1007
31221

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Խաղաղ ժամանակվա լեհական բանակն ունի 303 հազար մարդ, այսինքն՝ մի զինվորն ընկնում է բնակչության 100 հոգուն (ԽՍՀՄ 1 կարմիր բանակայինն ընկնում է բնակչության 300 հոգուն:):

Հետևակն իր թվական քանակով բանակում գրավում է առաջին տեղը (45%) և բաղկացած է 90 գնդից, վորոնք կազմում են 30 դիվիզիա: Խաղաղ ժամանակվա գնդերն ունեն տարբեր հաստիքներ (շտատներ): Գնդի մոտավոր կազմն է՝ 56 սպա, 1.400 շարքային, 54 ձեռքի և 24 հաստոցավոր գնդացիր, 54 նռնանետ, 6 գումարտակային հրանոթ և 2 գնդային թնդանոթ:

Հեծելազորը գրավում է յերրորդ տեղը (12,5%) և բաղկացած է 40 գնդից, վորոնք կազմում են դիվիզիաներ ու հեծյալ բրիգադներ: Հեծգնդի կազմակերպությունը մոտավորապես նույնն է, ինչ մեզ մոտ: Բայց գնդի սպառազինության մեջ գտնվում է 800 ատրացան (կարաբին), 850 թուր, 380 նիզակ, 16 ձեռքի և 12 հաստոցավոր գնդացիր:

Հրետանին գրավում է յերկրորդ տեղը (15,7%) և բաղկացած է 30 թեթև (դիվիզիական) և 10 ծանր (զորամարմնային) հրետգնդերից, մեկ մեծ ուժգնության գնդից, մեկ լեռնային հրետանու գնդից, մեկ մանյովրային գնդից և մեկ մանյովրային բաժնյակից, 14 հեծյալ հրետբաժնյակից, մեկ զենիթային հրետանու գնդից և 6 զենիթային բաժնյակից: Հրետգունդն ունի յերեքական բաժնյակ 2—3 մարտկոցի կազմով: Մարտկոցում կա 4 հրանոթ:

Ավիացիան Լեհաստանում այժմ ուժեղ է զարգանում. կա 6 ավիագունդ: 1923 թվից մինչև 1930 թիվը շարքում յեղած սավառնակների թիվը 120–ից հասել է 450–ի:

Զրահատանկային զորքերը կազմում են 1 տանկային գունդ, զրահագնացքների 2 բաժնյակ, զրահամեքենաների 2 բաժնյակ:

Մասնագիտական ու տեխնիկական մասերը բաղկացած են ճարտարապետական–սապյորական, կապի, յերկաթուղային, քիմիական և այլ զորքերից:

Բանակի քաղաքական դրության վրա հսկելու համար կա ժանդարմական կորպուս, վորը բաղկացած է մոտ 5 հազար հոգուց. կորպուսը բաժանված է ժանդարմական 10 բաժնյակի, յուրաքանչյուրում՝ 7 դասակ: Դասակները տեղավորված են խոշոր կայազորներում:

Սահմանների պահպանության համար կա սահմանապահ զորամարմին (կորպուս), վորը բաղկացած է 29 գումարտակից, 20 եսկադրոնից ու մեկ ժանդարմական բաժնյակից, վորոնք կազմում են 6 բրիգադ: Ամբողջ զորամարմնի 4/5 մասը գտնվում է ԽՍՀՄ սահմանների վրա:

Մինչև վերջին տարիներս լեհական բանակն ուներ ամենաբազմազան տրամաչափի զենք: Ներկայումս զորամասերի մեծամասնությունն իր սպառազինման մեջ ունի զենքի միատեսակ տիպարներ: Հետևակի մեջ նախկին ռուսական, գերմանական ու ավստրիական հրացանների փոխարեն մտցվում են լեհական կառուցվածքի հրացաններ ու ատրճաններ: Հաս–

տոցավոր գնդացիրը Մաքսիմի սիստեմի յեն: Մտցված են Բրաունինգի սիստեմի թեթև գնդացիրներ: Թեթև հրետանին զինված է ֆրանսիական 75 մ.մ. թնդանոթներով:

Կան նոր տիպարների, վորոնց մեջ նաև անվավոր տիպարի, սավառնակներ:

Բացի կանոնավոր բանակից Լեհաստանում գոյություն ունեն բազմաթիվ ռազմա-ֆաշիստական միություններ, վորոնք խաղաղ ժամանակ գործադրվում են հեղափոխական շարժման դեմ պայքարելու համար, իսկ պատերազմի ժամանակ նրանք գործող բանակների համալրման աղբյուր են ծառայելու: Այդ կազմակերպությունների ընդհանուր թիվը մեկ միլիոն հոգուց ավելի չէ: Այդ կազմակերպություններն ընդգրկում են առաջին հերթին նախկին զինվորականներին և առավելապես քաղաքի ու գյուղի մանր-բուրժուական յերիտասարդությանը, չբացառելով նաև կանանց:

Ծովային սահման.—Լեհաստանն ունի ընդամենը 100 կիլոմետր յերկարությամբ, բայց և այնպես լեհական բուրժուազիան նպատակ է դրել ունենալ խոշոր ռազմածովային նավատորմ: Ներկայումս Լեհաստանի նավատորմն ունի 5 գերմանական փոքր ականանավ, 2 ծովային կանոներային նավակներ, 3 ականորս նավ (տրալշչիկ) և 3 սուզանավ, վորոնք կառուցված են ֆրանսիական գործարաններում: Առաջիկա տարիներում պետք է կառուցվեն 6 ականանավ, 9 սուզանավ և մի քանի օժանդակ ռազմանավ: Ուժեղ կերպով կառուցվում է մեծ ռազմածովային նավակայան Գդինայում, վորի համար ծախսված են տասնյակ միլիոն ռուբլիներ: Նավակայանի շինարարությունը ղեկավարում են ֆրանսիական ռազմածովային սպաները:

## ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Լեհաստանում գոյություն ունի ընդհանուր զինապարտության օրենք, վորով յուրաքանչյուր քաղաքացի, դառնալով 21 տարեկան, կանչվում է իսկական զինվորական ծառայության: Ամբողջ զինվորական ծառայությունը բաղկացած է 2 տարի իսկական ծառայությունից, 17 տարի պահեստում (յերկարատև արձակուրդում) գտնվելուց և 10 տարի ընդհանուր աշխարհազորում (պոպոլչենիայում) գտնվելուց: Տերտերներն ու վարդապետներն միանգամայն ազատ են զինվորական ծառայությունից:

Յենթասպայական կազմը (կրտսեր հրամկազմը) համալրվում է գնդային դպրոցներն ավարտված շարքայինների (սոլդատների) կազմից և թողնելով յենթասպաներին գերակետիկ իսկական ծառայության մեջ, «սերժանտներ» և «ավագ սերժանտներ» (դասահրամի օգնականներ ու ավագներ) կարող են լինել միայն գերակետիկները:

Յենթասպա դառնալու համար պահանջվում է՝ լավ ավարտել գնդային դպրոցը, լավ գիտենալ լեհական լեզուն, քաղաքականապես միանգամայն «բարեհույս» լինել: Գերակետիկներից պահանջվում է ամենապակասը 4-ամյա դպրոցի կրթություն, վոչ ավելի քան 28 տարեկան



հասակ և պետք է լավ վկայություն (ատեստացիա): Գերակետիկները պարտավորվում են բանակում ծառայել վոչ պակաս քան 3 տարի:

Այս բոլոր պայմաններից յերևում է, վոր բուրժուազիան յենթասպայական կազմի խիստ ընտրանք է կատարում: Նախ՝ յենթասպայությունն համարյա միանգամայն անմատչելի յե ազգային փոքրամասնությունների աշխատավորների համար, վորովհետև նրանք ճնշող մեծամասնությամբ վոչ բոլորն են գրագետ վոչ միայն լեհական, այլև իրենց մայրենի լեզվով: Յերկրորդ՝ յենթասպա դառնալու համար պետք է քաղաքականապես միանգամայն «բարեհույս» լինել, իսկ այդ պայմանին ամենից առավել համապատասխանում են ունևորներն ու կուլակները:

Լեհական բանակում գոյություն ունեն հետևյալ սպայական աստիճանները.—

| | |
|---|---|
| Պոդպորուչիկ<br>Պորուչիկ<br>Կապիտան (Լեհաստանում ռոտմիստր) | Համապատասխանում է միջին հրամկազմին |
| Մայոր<br>Փոխգնդապետ<br>Գնդապետ | Համապատասխանում է ավագ հրամկազմին |
| Բրիգադի գեներալ<br>Դիվիզիայի գեներալ<br>Լրիվ գեներալ<br>Մարշալ | Համապատասխանում է բարձր հրամկազմին |

Լեհական օրենքներով սպա կարող է լինել իբր թե «յուրաքանչյուր սոսկական զինվոր», բայց փաստորեն սպայական դպրոցների մուտքը փակ է սոսկական կազմի համար, շնորհիվ քաղաքական ու հանրակրթական կարգի մեծ պահանջների: Ճիշտ է, յուրաքանչյուր սոսկական կարող է ստանալ պոդպորուչիկի աստիճան վորևէ աչքի ընկնող մեծ արժանիքի համար, մանավանդ «ներքին անկարգությունների» ճնշման ժամանակ, բայց այդ աստիճանն ինչպես օրենքն է ասում, նա ստանում է միայն...մահից հետո:

Սպայական կազմը համալրվում է բուրժուազիայից ու կալվածատերերից: Քաղաքականապես «անբարեհույս» յուրաքանչյուր սպա անխնա կերպով վտարվում է բանակից: Օրինակ՝ ֆաշիստական դիկտատուրայի ժամանակ բանակից արձակված են 5 հազար սպա, այսինքն՝ ամբողջ սպայության համարյա $1/3$ մասը:

Ինչպես հայտնի յե, լեհերը կազմում են բնակչության մոտ 60 տոկոսը, և մոտավորապես նույնպիսի տոկոս են նրանք կազմում բանակում: Մնացած 35—40 տոկոսը—ուկրայինացիներ, բելոռուսներ, հրեաներ և մանր ազգային փոքրամասնություններ են: Ազգային խավը միատեսակ չէ բոլոր զորամասերում: Ամենից «լեհականն» են հանդիսանում մասնագիտական, տեխնիկական զորամասերը և առաջին հերթին ավիացիան ու զրահատանկային մասերը, վորտեղ ազգային փոքրամասնություններից համարյա չեն նշանակվում: Հրետանու և մասնագիտական

զորքերի մեջ ուկրաինացիներն ու բելոռուսները նշանակվում են մեծ սահմանափակումներով:

Բուրժուազիան չի վստահում ազգային փոքրամասնություններին ել ավելի, քան աշխատավոր լեհերին, և այդ պատճառով նա վախենում է ազգային փոքրամասնություններին թողնել բանակի ամենապատասխանատու մասերի մեջ:

Բանակի ռազմական պատրաստությունը գտնվում է բավական մեծ բարձրության վրա: Այդ տեսակետից լեհական բանակի զինվորն զգալիորեն գերազանցում է ռումինական ու Մերձբալթյան յերկրների զինվորներին: Լեհական բանակը մինչև այժմ շարունակում է սովորել ֆրանսական սպաների հսկողության տակ: Մեծ ուշադրություն է նվիրվում մարտիկների հրաձգային ու տակտիկական պատրաստությանը: Լեհական բանակի զինվորը լավ կրակում է, լավ գործում է տեղանքում և վատ չի ըմբռնում մարտական պարագան:

## ԲԱՆԱԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեհական բանակում հագուստեղենն ու կերակուրը կարող եյին միանգամայն լավ լինել, բայց մատակարարման մարմինների չարաշահությունների և դեպի այդ գործը շարային սպաների ցույց տված անփութության հետևանքով, զինվորները միշտ լավ հագնված ու լավ սնված չեն լինում: Հաճախակի պատահում են զինվորների, մասսայական թունավորումներ, վորը հաճախ առաջացնում է զինվորական մասսայի խոր վրդովմունքը: Այդպիսի մի դեպք տեղի ունեցավ 19-րդ հետևակային գնդում (Նովո-Վիլեյկում), վորի զինվորները պահանջում եյին բարելավել սնունդը: Նրանք դեն ածեցին հոտած ճաշը, ջարդեցին պահեստը և իրենց մեջ բաժանեցին պահածոները: Դրանից հետո կազմակերպեցին միտինգ, վորտեղ զինվորները հանդես յեկան պաշտպանելու իրենց պահանջները: Այդպիսի դեպքերը յեզակի չեն:

Լեհական բանակի զինվորը քաղաքականապես միանգամայն իրավազուրկ է: Նա զուրկ է ընտրական իրավունքներից, նա չի կարող պատկանել ոչ մի քաղաքական ու հասարակական կազմակերպության: Պետերի թույլտվությամբ նա կարող է անդամագրվել միայն այն քաղաքացիական, գլխավորապես կրոնական կազմակերպություններին, վորոնց գործունեյությունը թույլատրված է բանակում պետերի թույլտվությամբ: Զինվորին արգելված է ներկա գտնվել քաղաքական բնույթի միտինգներում, ժողովներում, դասախոսություններում: Թերթում հոդված գրելու համար նա պետք է հատուկ թույլտվություն ստանա բարձր պետերից:

Այս բոլոր արգելքներն որենքով պարտադիր են նաև սպաների համար, բայց իրականում սպաները կենդանի մասնակցություն են ցույց տալիս քաղաքական կյանքին:

Զինվորի իրավունքների սահմանափակումները տարածվում են նաև նրա անձնական կյանքի վրա: Զինվորն իրավունք չունի ամուսնանալու, իսկ բացառիկ դեպքերում նա կարող է ամուսնանալ պետերի (վոչ պակաս քան գնդի հրամանատարի) թույլտվությամբ, դրա համար զինվորը պետք է ներկայացնի մի շարք փաստաթղթեր, վորոնց մեջ պետք է տեղեկանք լինի գավառային իշխանությունից նրա հարսնացուի «բարոյականության» ու «անարատության» մասին: Առանց թույլտվության ամուսնանալու համար զինվորը յենթարկվում է 3 ամսվա բանտարկության:

Նույն այդ սահմանափակումները տարածվում են նաև յենթասպայական կազմի վրա: Գերակետիկները կարող են ամուսնանալ միայն բանակում 3 տարի ծառայելուց հետո: Իհարկե, նրանցից նույնպես պահանջվում են նույն փաստաթղթերը:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Կարգապահությունը լեհական բանակում աչքի յե ընկնում իր դաժանությամբ:

Շարքային կազմի նկատմամբ գործադրվում են հետևյալ տույժերը. հանդիմանություն, պետին զննության համար ներկայանալը (հեծելազորում ձիով) մինչև 7 որ, արտահերթ վերակարգեր—մինչև 14 որ, բակից չարձակելը—մինչև 28 որ, թեթև կալանք մինչև 28 որ, միջին կալանք—մինչև 21 որ և խիստ կալանք—մինչև 14 որ:

Թեթև կալանքը—դա կալանք է պաշտոնական պարտականությունների կատարումով: Միջին կալանքը—մեկուսացրած կալանք է, խիստ կալանքը մեկուսացրած կալանք է, կոշտ անկողնու մեջ քնելով (առանց ներքնակի), սնունդը՝ հաց և ջուր. տաք կերակուր տրվում է յերեք որը մեկ անգամ: Կալանավորներին արգելվում է ծխել ու գրել և մինչև իսկ նամակներ ստանալ:

Մանյովրներում ու դաշտ դուրս գալիս կալանքները փոխարինում են հրացանի տակ կանգնեցնելով, ինչպես առաջ անում եյին ցարական բանակում, այսպիսի հաշվով.—թեթև կալանքի մի որվա փոխարեն—մի ժամ, միջին կալանքի մի որվա փոխարեն և խիստ կալանքի մի որվա փոխարեն—յերկու ժամ հրացանի տակ լրիվ յերթական հանդերձանքով:

Բացի այդ տույժերից, գոյություն ունեն նաև ապորինի պատիժներ: Որինակ՝ չենքը ծածկված գլխով ներս մտած զինվորին ստիպում են մի քանի անգամ վազել չորեքթաթ, գլխարկը պահած ունենալով ատամներով: Ծեծը պաշտոնապես վերացված է: Սակայն փաստորեն զինվորին ծեծում են հաճախակի: «Գաղտնի» ծեծում են առավելապես յենթասպաները, ըստ վորում սակավ թե գտնվի զինվորներից մեկը, վորը համարձակվի գանգատվել:

Ամենից շատ տուժում են ազգային փոքրամասնություններին պատկանող զինվորները, այսինքն՝ ուկրաինացի, բելոռուս, հրեա և այլ զինվորները: Սրանց համար մտցնում են լրացուցիչ պարապմունքներ, վորոնք տարվում են յերեկոները: Հաճախ նրանց արգելում են խոսել մայրենի լեզվով, մինչև իսկ ծառայությունից դուրս: Սաստիկ տարածված են վիրավորական մականուններ տալն ու ամեն տեսակի ծաղրանքը:

Սպաների վերաբերմունքը դեպի զինվորները բացառապես պաշտոնական է: Զինվորը «անբան անասուն է»: Առանձին, չափազանց սակավ

սպաներ, յերբ փորձում են մարդավայել մտածել ցույց տալ զինվորին, անմիջապես գաղտնի հսկողության տակ են ընկնում և կորցնում են պաշտոնով հառաջադիմելու հնարավորությունը: Հարկավ գոյություն չունի փոխադարձ վստահություն ստորադրյալի ու պետի միջև:

## ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Լեհական բուրժուազիան զինվորի քաղաքական մշակումը տանում է հայրենասիրության և «դեպի հայրենիքը տածած սիրո» հիմունքներով:

Զինվորին ներշնչվում ե այն միտքը, թե դասակարգային հակասությունները «հանցագործ» մարդկանց մտացածին մտքերն են, վոր հեղափոխական շարժումը հնարում են դարձյալ «հանցագործները» և առաջին հերթին «խորհրդային գործակալները»: Բոլոր մարդիկ «հավասար են», նրանք բոլորը «յեղբայրներ են» և բոլորն ել «հայրենիքի» զավակներ են ու հավասարապես պետք ե սիրեն ու պաշտպանեն իրենց «հայրենիքը»: Մեր ԽՍՀՄ պատկերացվում ե կեղծ ու մտացածին:

Զինվորը դաստիարակվում ե այն վոգով, թե առանց առարկության պետք ե յենթարկվել բուրժուազիայի սահմանած որենքներին ու իշխանությանը: «Նա պարտավոր ե սիրել հանրապետության նախագահին, նա պետք ե հարգանքով մտածի ու խոսի պետության կառավարող իշխանության մասին: Նա պարտավոր ե ողջունել պետական աստիճանավորներին և նա պետք ե կանոնավոր ձևով մուծի իրեն հասանելիք հարկերն ու տուրքերը»: Ահա այն «ուսմունքի» իմաստը, վորն ամեն որ, ծառայության ամբողջ ընթացքում զինվորական մասսայի գիտակցության մեջ են մտցնում:

Զինվորների մշակումը կատարվում ե զանազան յեղանակներով: Ծառայության առաջին 8 շաբաթների ընթացքում ամեն որ տարվում են զրույցներ «զինվորի պարտականությունների մասին» և այդ բանակում գտնված ժամանակվա հետագա ամիսներում զինվորներն անցնում են հանրակրթական դասընթաց, վորն ամբողջովին թունավորված ե լինում բուրժուական հայացքներով: Հատուկ ուշադրություն ե նվիրվում Լեհաստանի պատմությանն իր «թագավորներով», և անցյալի ու ներկայի «առաջնորդներով ու հերոսներով»: Այդ աշխատանքը կենտրոնացված ե «սվետլիցաներում» (զինվորական անկյուններում), վորոնցից կան յուրաքանչյուր զորամասում և «զինվորական տներում», վորոնք կազմակերպվում են կայազորերում: «Սվետլիցաներում» շաբաթը յերկու անգամ ծառայությունից դուրս ժամանակում տարվում են զանազան թեմաների շուրջ զրույցներ ու զեկուցումներ: «Զինվորների տները» գլխավորում են վարչությունները, վորոնք բաղկացած են բացառապես սպաներից:

Յենթասպայական կազմն ունի իր ակումբները:

«Սպայական ժողովարանները» միայն սպաների համար են: Սոսկականի ու յենթասպայի համար նրանց մուտքը փակ ե: Այնտեղ իշխում ե վոչ թե կուլտուրական աշխատանքը, այլ հարբեցողությունն ու վորկրամոլությունը:

Զինվորների մշակումը կատարվում ե առաջին հերթին սպայական



ու յենթասպայական կազմի և հոգևորականության կողմից: Հոգևորականությունը չափազանց կարևոր դեր ե խաղում բանակում: Այդ մշակմանը մասնակցում են նաև զանազան քաղաքացիական բուրժուական կազմակերպությունները («Զինվորների խնամակալության կոմիտեներ», «Կանանց լիգա», «Սպիտակ խաչ» «Զինվորական ընտանիք»):

Զինվորների գիտությունը թունավորելու համար ուժեղ աշխատանք ե տանում նաև մամուլը:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱՆԱԿՈՒՄ

Վերջերս պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական վերելքի հետևանքով հեղափոխական գաղափարներն ավելի ու ավելի յեն բանակը մտնում: Հաճախակի յեն զինվորական բունտերը, վորոնք առաջանում են ծառայության ծանր պայմաններից, և հաճախ այդ բռնկումները կրում են պարզ արտահայտված քաղաքական բնույթ:

1930 թվի ամռանը տեղի ունեցավ Վարշավայի բանվորներից 300 նորակոչ զինվորների յելույթը, վորոնք գնում եյին Վիլնայի զորամասերի համալրման համար: Նորակոչիկները ծեծի յենթարկեցին Բելոստոկ կայարանի ժանդարմներին և կազմակերպեցին թռուցիկ միտինգ, վորտեղ արտասանում եյին հեղափոխական ճառեր:

Ռեմբերտովոյում (Վարշավայի տակ) դասավորված զորամասերում մի քանի շաբաթվա ընթացքում կազմակերպվում եյին բողոքի միտինգներ ընդդեմ ուժից վեր աշխատանքների ու սպաների վատ վերաբերմունքի:

Ռեմբերտովոյի մանյովրային գումարտակի զինվորները հեղափոխական թռուցիկ գրեցին՝ ուղղված Վարշավայի խոշոր գործարանի բանվորներին: Պոզնանի կայազորի զինվորները մի թռուցիկով դիմեցին մի այլ խոշորագույն գործարանի բանվորներին: Վարշավայի կայազորի զինվորները հրատարակեցին մի թռուցիկ, բողոքելով նրա դեմ, վոր զինվորներին ուղարկում են Արևմտյան Ուկրաինայի աշխատավորների ճնշման համար:

Մողիլեց քաղաքում գործադուլավորների դեմ դուրս եր կանչված մի վաշտ հետևակ: Զինվորները հրաժարվեցին դուրս գալու ցուցարարների դեմ: Նույնպիսի պատմություն տեղի ունեցավ Սկերնեվիցում ու Սեդլեցում. յերբ սպաները հրամայեցին կրակ բանալ, զինվորները կարծես հրամանով ցած գցեցին հրացանները և տեղից չշարժվեցին: Լոձում 31-րդ հետևակ գնդի վարժական խումբն ի պատասխան արձակուրդի մերժման բունտ բարձրացրին, փակվեցին զորանոցում և դիմադրեցին սպաների դեմ:

1931 թվի հունվարի կեսերին Վարշավայում «Զինվորների տան» մոտ տեղի ունեցավ միտինգ, վորին մասնակցում եյին 200 բանվոր և 60 զինվոր:

Վիլնայում 6-րդ հետևակ գնդում 70 զինվոր հրաժարվեցին պարապմունքի դուրս գալուց: Վիլնայում 5-րդ գնդում զինվորներն ինքնակամ հեռացան պարապմունքներից և գնացին զորանոցները:

Վիլնայում գործադուլավորների ցույցի ժամանակ տեղի ունեցավ կատաղի ընդհարում վոստիկանության հետ: Վոստիկանության կոմիսարն

ոգնության խնդրեց սպայից, վորն անցնում եր նրանց մոտից զինվորների ջոկատով: Տեսնելով զինվորների բացահայտ համակրանքը դեպի ցուցարարները, սպան հրաժարվեց իր ջոկատը դուրս բերել գործադուլավորների դեմ:

1931 թվի օգոստոսի մեկի նախօրեյին կոմունիստական ցույցի ժամանակ Ուլանական գնդի զորանոցից վոստիկանության ոգնելու դուրս վազեցին սպաներն ու յենթասպաները: Այն ժամանակ զինվորների մի մասը պաշտպան դուրս յեկավ ցուցարարներին, բողոքելով կոտորածի դեմ:

Ջենստոխովայում ուզում եյին 200 գրամով պակասեցնել 27-րդ հետևակ գնդի զինվորների հացի բաժինը: Դրան վորպես պատասխան հրաժարվեցին պարապմունքի դուրս գալուց: Ստիպված յեղան բաժինը չպակասեցնել:

Լեհաստանի զինվորական մասսաներն սկսում են դուրս գալ հեղափոխական պայքարի լեհական կոմկուսակցության ղեկավարությամբ:

Իհարկե, լեհական բանակը շարունակում է մնալ մեր արևմտյան սահմանների ամենից բազմամարդ և ամենից պատրաստված բանակը: Նա տակավին բավականաչափ կայուն է: *Բայց անկասկած, հեռահետ, յերբ ավելի կզարգանա ճգնաժամը*, բանակն ավելի ու ավելի նվազ չափով հուսալի զենք կլինի լեհական ֆաշիզմի ձեռքում:

## Ռ Ո Ւ Մ Ի Ն Ի Ա

Ռումինիան իր մեծությամբ, Լեհաստանից հետո, մեր յերկրորդ հարևանն է արևմուտքում: Մինչև համաշխարհային պատերազմը նա փոքրիկ պետություն եր 138 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ և 7,5 միլիոն բնակչությամբ: Ներկայումս Ռումինիան գրավում է 292,2 հազար քառակուսի կիլոմետր տարածություն և ունի մոտ 18 միլիոն բնակչություն: Ռումինիայի ավելի քան կրկնակի աճումը բացատրվում է նրանով, վոր համաշխարհային պատերազմի ժամանակ նա դուրս յեկավ դաշնակիցների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա) կողմում, վորի համար նրանց թույլտվությամբ բազմաթիվ հողեր ստացավ նախկին Ավստրո-Հունգարիայից (Տրանսիլվանիա, Բուկովինա և այլն):

1918 թվի հունվարին ռումինական բոյարներն ոգտվելով խորհրդային յերիտասարդ հանրապետության թուլությունից, բռնի կերպով գրավեցին ու իրենց միացրին մեր Բեսարաբիան մոտ 3 միլիոն բնակչությամբ: Բեսարաբիայի այդ հափշտակումը հետագայում հաստատեցին կապիտալիստական խոշոր պետությունները, վորպես պարգև այն ոգնության, վոր ռումինական բոյարները ցույց տվին մեր դեմ մղած պայքարում: Խորհրդային կառավարությունը յերբեք օրինավոր չի համարել Բեսարաբիայի հափշտակումը, այլ այդ դիտել ու դիտում է, վորպես ԽՍՀՄ դեմ կատարած իմպերիալիստական բռնի, հափշտակչական մի ակտ:

Այն պատճառով, վոր Ռումինիային միացվեցին մի շարք այլ մարզեր, բնակչության ազգային կազմն ամենևին միատարր չէ: Ռումինները ամբողջ յերկրում կազմում են բնակչության 2/3-ը, իսկ Բեսարաբիայում վոչ ավել, քան 20 տոկոսը: Առավել խոշոր ազգային փոքրամասնու-



թյուններ են համընկնում ռուսներն ու մոլդավանները (Բեսարաբիայում), հունգարացիք ու գերմանացիները (Տրանսիլվանիայում), ուկրայինացիները (Բուկովինայում) և հրեաները: Բուկովինայում ռումինները կազմում են 34 %, այն էլ սովորաբար իրենց մոլդավաններ են անվանում: Դոբրուջայում ռումինների տոկոսը միանգամայն չնչին է, Բեսարաբիայում ռումինները յերևացել են միայն ոկուպացիայից (գրավումից) հետո: Դեպի ազգային փոքրամասնությունները ռումինական բուրժուազիան վարում է ճնշման ամենադաժան քաղաքականություն: Առանձնապես ծանր է ապրում Բեսարաբիայի բնակչությունը:

Ինչպես ասված է վերևում, Բեսարաբիայի հափշտակությունը մենք յերբեք չենք ընդունել, և հենց այդ պատճառով արդեն Ռումինիան ԽՍՀՄ ամենավոխերիմ հակառակորդն է և մեր թշնամիների դաշնակիցը: Նրանց հետ և առաջին հերթին՝ Ֆրանսիայի հետ նա կնքում է ամեն տեսակ դաշինքներ ու պայմանագրեր, վորպեսզի իր ձեռքում պահի հափշտակածը և դուրս գա ԽՍՀՄ դեմ վորպես պատերազմի նախաձեռնողներից մեկը: Այս բոլորը հաստատեց «Արդյունաբերական կուսակցության» դատավարության ժամանակ հակահեղափոխական վնասարարական կազմակերպության պարագլուխը՝ Ռամզինը:

Մենք քանիցս առաջարկել ենք Ռումինիային համաձայնության գալ մեզ հետ մի շարք հարցերի, վորոնց թվում նաև Ռումինիայի հարցի առթիվ. բայց մեր խաղաղ առաջարկները միշտ էլ դեմ են առել ռումինական բուրժուազիայի մերժման: Վոչ մի դիվանագիտական ու առևտրական հարաբերություն Ռումինիայի հետ մենք չունենք:

## ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ռումինիան գյուղատնտեսական յերկիր է: Գյուղատնտեսությամբ զբաղված է ամբողջ բնակչության 80 տոկոսը: Գյուղատնտեսության ու անասնաբուծության մթերքները տալիս են ամբողջ արտահանության 70 տոկոսը: Գյուղատնտեսական հարկերը տալիս են 9 միլիարդ լեյ (մեկ լեյը հավասար է մեկ կոպեկի), այն ժամանակ, յերբ հարկերի ընդհանուր գումարը կազմում է 13 միլիարդ լեյ:

Ռումինիայի գյուղացիությունը, ինչպես և Լեհաստանի գյուղացիությունը, զգում է հողի սուր կարիք:

4 միլիոն ծխից համարյա 3 միլիոն ծուխը, կամ 83 %-ը, ունի միջին հաշվով 2 հեկտար հողբաժին, մինչդեռ 10 տոկոս կազմող ունևորներն ու կուլակները միջին հաշվով ունեն 20–50 հեկտար հողաբաժին, իսկ 0,5 տոկոս կազմող կալվածատերերն իրենց ձեռքում ունեն ամբողջ հողի 32 տոկոսից ավելին: Միևնույն ժամանակ չքավոր ու միջակ ծուխերը վճարում են ամբողջ հողային հարկի 50 տոկոսը, իսկ խոշոր տնտեսությունները՝ հարկերի ամբողջ գումարի միայն 20 տոկոսը:

1921 թվին ռումինական բուրժուազիան, սարսափելով հեղափոխության վտանգից, հայտարարեց հնողնումով կալվածատերերի հողի գրավում հօգուտ գյուղացիության: Այդ օրենքն սկսեց կիրառվել միայն 1924 թվից: Հողը վաճառվեց վոչ թե գյուղի չքավորությանը, այլ ու-

նեմորներին ու կուլակությանը, այնպես, վոր այդ ռեֆորմի հետևան-քով ավելացավ կուլակների թիվը:

Կալվածատիրական 13 միլիոն հեկտար հողից ագրարային ռեֆոր-մի հետևանքով գնման պայմաններով վաճառվեց միայն 6 միլիոն հեկ-տարը: 2 միլիոն հեկտար գրաված հողից պահվեց, վորպես պետության պահեստ (ռեզերվ), մնացած 4 միլիոնը վաճառեցին առանձին հողա-մասերով: Հողաբաժնի իրավունք ունեցող 3 միլիոն ընտանիքից մոտ 800 հազար ընտանիք զրկված էյին այդ իրավունքից: Մնացածից 700 հազար ընտանիք թեև մտցրված էյին ցուցակների մեջ, բայց փաստա-րեն հող չստացան: Հող ստացած 1,5 միլիոն ընտանիքներն իրենցից ներկայացնում են մեծ մասամբ բուրժուազիայի հուսալի դասակարգա-յին հենարանը գյուղում (կուլակներ, հարկահավաքներ, տերտերներ, ոստիկաններ և այլն): Այդպիսով այդ ռեֆորմը նպաստեց կուլակու-թյան աճմանը և չքավոր-գյուղացիական մասսաների քայքայմանը:

Խոտինսկու գավառում (Բեսարաբիայում) մինչև 1914 թիվը հո-ղազուրկ ու լծկան չունեցող գյուղացիների թիվը յեղել է՝ 1·700 հոգի, 1923 թվին նրանց թիվը յեղել է 8·200 հոգի, իսկ 1924 թվին արդեն 29 հազար հոգի, այսինքն՝ 17 անգամ ավելի, քան մինչև 1914 թիվ: Իսկ 30—40 հեկտար ունեցողների թիվը 1914 թվին յեղել է 220, 1923 թվին 415, իսկ 1924 թվին 702 հոգի:

Նույնպիսի դրություն է ստեղծվել Ռումինիայի այլ մարզերում: Այդ օրենքով հող ստացած գյուղացիները բացի բոլոր հարկերից վճա-րում են նաև մեծ յետգնում: Դրա հետևանքով գյուղացիական մանա-վանդ մանր տնտեսությունները մեծ պարտքերի տակ է ընկել:

Ռումինիայում մշակվում է յեգիպտացորեն (կուկուրուզա),—վորը բնակչության հիմնական սննդամթերքն է,—ցորեն, վորն արտահանու-թյան (էքսպորտի) գլխավոր ապրանքն է և վարսակ ու գարի: Տեխնի-կական մշակույթները (կտավատը, կանեփը) շատ փոքր տեղ են բռնում:

Դաշտերի բերքատվությունը գյուղացիական տնտեսությունների հիմնական մասսայի մանր հողաբաժինների, նրանց սուղ ինվենտարի ու պարարտացման հետևանքով զգալիորեն նվազել է համեմատած նախա-պատերազմյան մակարդակի հետ: Ցորենի բերքատվությունն իջել է 23 տոկոսով, վարսակինը՝ 20%, գարունը՝ 19%, յեգիպտացորենինը՝ 13%:

Ռումինիան համաշխարհային ճգնաժամի մեջ մտավ արդեն իսկ խարխլված տնտեսությամբ, և այժմ նա չտեսնված դժվարություններ է կրում: Վերջին յերեք տարվա ընթացքում կրկնակի չափով ընկել են գյուղատնտեսական մթերքների գները: Արտահանությունը կրճատվել է մի քանի անգամ: Արագ կրճատվում է նաև ցանքերի տարածությու-նը: Օրինակ՝ 1931 թվին համեմատած 1929 թվի հետ, ցորենի ցան-քադաշտը կրճատվել է ամբողջ Ռումինիայի 245 հազար հեկտարով, գարու ցանքադաշտը 8,5 հազար հեկտար, տարեկանինը (ռոժ) 7,5 հազար հեկտար:

Առանձնապես արագ կրճատվում է ցանքադաշտը Բեսարաբիայում. ցորենինը՝ 55 հազ. հեկտար, իսկ տարեկանինը՝ 23 հազար հեկտար:

Ճգնաժամն առավելագույն չափով անդրադարձել է գյուղացիության



չքավոր ու սակավահող խավերի վրա, վորոնք դրա հետ միասին նաև ճնշված են կուլակության կեղեքումով: Գյուղի քայքայումն ըն-թանում է չափազանց արագ տեմպով և այդ հողի վրա ծավալվում են դասակարգային խոշոր մարտեր:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռումինիայի արդյունաբերությունը թույլ է զարգացած: Առաջին տեղը գրավում է նավթային արդյունաբերությունը, վորը տալիս է ամբողջ արտահանության մոտ 20 տոկոսը: Նա կենտրոնացված է գլխա-վորապես Պրախովի և Դիմբովիցիայի (Բուխարեստից դեպի հյուսիս) ռայոնում: Արդյունահանումը կազմում է տարեկան մոտ 4,5 միլիոն տոնն: Վերջին մեկ և կես տարվա ընթացքում համաշխարհային ընդ-հանուր ճգնաժամի հետևանքով նավթի արդյունահանումն իջել է ավելի քան 30 տոկոսով: Բացի նավթից, Ռումինիան հարուստ է գորշ քա-րածուխի պաշարներով (վորը տալիս է տարեկան մոտ 2,5 միլիոն տոնն արդյունահանում): Ընդամենը արդյունահանող արդյունաբերու-թյան մեջ զբաղված է մոտ 100 հազար հոգի: Մշակող արդյունաբերու-թյան մեջ, վորտեղ զբաղված է ավելի քան 200 հազար հոգի, բանվորների քանակով առաջին տեղն է բռնում փայտագործական արդյունաբերու-թյունը, այնուհետև՝ մետաղաձուլականը, տեքստիլը և շինարարականը:

Ներկայումս արդյունաբերության բոլոր ճյուղերը սուր ճգնաժամ են ապրում: Գործազրկությամբ ընդգրկված է մոտ 300 հազար հոգի, այսինքն՝ արդյունաբերական բոլոր բանվորների կեսը: Աշխատավարձը չափազանց ցածր է:

Չնայած յերկրի ծանր դրության, ռումինական բուրժուազիան մեծ միջոցներ է ծախսում իր ռազմական արդյունաբերությունը պահպանե-լու համար, վորն աշխատում է լրիվ թափով: Վառոդի ու փամփուշտի գործարանները լրիվ բավարարում են խաղաղ ժամանակվա ռու-մինական բանակի պահանջներին: Կա սեփական ավիագործարան:

1931 թվին Բուխարեստի մոտ սկսել են կառուցել պայթուցիկ նյու-թերի և այլ մարտապաշարների մեծ գործարան: 1930 թվին ավարտված են Դիչե-Սան-Մարտինեյի քիմիական գործարանները: Սարքավորված է հակագազերի գործարանը: Բացի դրանից, 30 հազար հակագազ պատվիրված է արտասահմանում: Դրա հետ միասին կառուցվում են յերկաթուղիներ ու խճուղիներ:

1924 թվին սկսված է և 1930 թվին ավարտված է Սորոկի—Վոլովի-ցիա—Ստոյկանի խճուղին: 1930 թվին սկսվել է Օրգեև—Ռեզինա և Կա-ուշանի—Աքկերման խճուղիների կառուցումը: Միաժամանակ տեղի յե-ունենում հին ճանապարհների վերանորոգումը, օրինակ՝ Քիշենև—Օր-գեև ճանապարհինը: Այս ճանապարհային բոլոր աշխատանքներն ստրա-տեգիկական բնույթ են կրում: Այդ ճանապարհներն ընթանում են կամ Դնեստրի յերկարությամբ, կամ արևմուտքից՝ արևելք, վորը պարզ ապացուցում է, թե ինչ չափով Ռումինիայի իշխող դասակարգերը Բե-սարաբիան վորպես պլացդարմ են պատրաստում հակախորհրդային պա-տերազմի համար: Բեսարաբիայում այդ նպատակով մոբիլիզացիայի

յե յենթարկված 7 սայլորական գումարտակ` յուրաքանչյուրը 1000 հոգուց բաղկացած: Պատերազմի ժամանակ Ռումինիան կարիք կզգա սպառազինումների ու արկերի փոխադրության, վորոնք պետք է ստացվեն Չեխոսլովակիայից կամ Ֆրանսիայից:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

*Ճգնաժամը խիստ սրել է դասակարգային հակասությունները: Գյուղացիական հիմնական մասսաների կիսամուրացիկ դրությունն անընդհատ առաջացնում են դասակարգային խոշոր մարտերի աճում: Այսպես, օրինակ` 1929 թվին լեռնարդյունաբերական ռայոնում— Ժիուլույի հովիտը,—գործադուլ արեցին հանքափորները: Նրանք դաժանաբար գնդակահարվեցին ժանդարմների ու զորքերի ձեռքով, վորոնց կանչել եյին գործարանատերերը: Հետագա տարիներում տեղի ունեցան բանվորների մի շարք գործադուլներ ու յելույթներ:*

*Հեղափոխական տրամադրությունները ընդգրկում են նաև ռումինական գյուղը, մանավանդ ծայրագավառների ու առանձնապես Բեսարաբիայի գյուղացիությանը: Այստեղ մանր գյուղացիության ընդհանուր քայքայմանն ավելանում է նաև իշխող դասակարգերի ազգային քաղաքականության վայրագ կամայականությունը: Կառավարությունը լայնորեն գործադրում է ծայրամասերի մանավանդ սահմանամերձ շերտի «ռումինացումը»: Ռումին կուլակներին տրվում են մեծ ու լավագույն հողամասեր: Ներգաղթողներին հաճախ տեղավորում են ժանդարմների ոգնությամբ, ստիպում են տեղական բնակչությանը նրանց համար կառուցել բնակարաններ, դպրոցներ, փոխադրել նրանց գույքը, սկզբնական շրջանում պարարտացնել նրանց հողը և կատարել զանազան աշխատանքներ: Միաժամանակ փակվում են ազգային դպրոցները և կրճատվում են ազգային փոքրամասնությունների առանց այն էլ խղճուկ իրավունքները. արգելվում է հասարակական վայրերում խոսել մայրենի լեզվով, ունենալ ազգային թերթեր, թատրոններ և այլն:*

*Պարզ է, վոր այսպիսի պայմաններում աշխատավոր գյուղացիության միակ յելքը մնում է ակտիվ պայքարը: Բեսարաբիան դարձել է մի շրջան, վորտեղ չարունակ տեղի յեն ունենում գյուղացիական մարտեր իշխանության դեմ, տեղական բուրժուազիայի դեմ: 1919 թվի հունվարին գյուղացիները Խոտինսկու գավառում զինված ապստամբություն բարձրացրին, վորն ընդգրկեց ամբողջ գավառը և հարևան Սորոկի գավառի մի մասը: Միայն կանոնավոր բազմաթիվ զորքերին ցույց տված համառ դիմադրությունից հետո ապստամբները թողեցին գավառը և նահանջեցին Դնեստր գետի մյուս ափը: Այդ ապստամբության ճնշման հետևանքով ավելի քան 8 հազար գյուղացի գնդակահարված եր ու դաժանաբար խոշտանգված, ուկրայինական ու մոլդավական տասնյակ գյուղեր հիմնովին հրդեհի եյին մատնված, ավելի քան 50 հազար գյուղացի փախավ Դնեստրի մյուս ափը:*

*Նույն այդ թվին Բենդերայում ապստամբության փորձի համար գավառում գնդակահարվեց յուրաքանչյուր տասներորդ գյուղացին:*

*1924 թվի աշնանը Ակկերմանի գավառում բռնկվեց Թաթար-բունարյան ապստամբությունը, վորն ընդգրկեց մի շարք գյուղեր: 1925 թվին Խոտինսկի գավառում կրկին ձերբակալվեցին 56 գյուղացի հեղափոխական յելույթ պատրաստելու համար:*



*Հեղափոխական շարժումը չդադարեց և վերջին տարիների ընթացքում հենց միայն 1930 թվի հոկտեմբերին յեղել են այնպիսի խոշոր յելույթներ, ինչպիսին է գյուղացիների ապստամբությունը Բայմակլիում (Կագուլյան գավառ), գյուղացիների ընդհարումը Նովոսելիցեյում (Խոտինսկու գավառ). գյուղացիական տարերային յելույթներն ուղեկցվում են նաև առանձին պարտիզանական հարձակումներով. այսպես օրինակ` նորերս տեղի ունեցավ հարձակում ժանդարմական շրջեկի դեմ Խոտինսկու գավառում: Բուկովինայի կալվածատերերի ու բուրժուազիայի համար 1930 և 1931 թ.թ. ահեղ սպառնալիք եր Պալիչչուկի պարտիզանական գյուղացիական ջոկատը:*

*Այս փաստերով ամենևին չի սպառվում հեղափոխական շարժումը Բեսարաբիայի քաղաքներում ու գյուղերում: Չնայած ամենադաժան տերրորին, հեղափոխական շարժումը դեպի վեր է գնում:*

Բանվոր դասակարգի ու գյուղացիության պայքարը գլխավորվում է ռումինական կոմկուսակցության կողմից, վորն աշխատում է չափազանց ծանր պայմաններում: Կուսակցությունը խոր ընդհատակյա գործունեության է մատնված: Նրա լավագույն առաջնորդները կա՛մ բանտերում են, կամ սպանված են:

*Բացահայտ աշխատում են սոցիալ-ֆաշիստներն ու կուլակային կուսակցությունները, վորոնք քանիցս դավաճանել են ռումինական բանվորներին ու գյուղացիներին:*

## ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

*Մինչև 1928 թիվը յերկիրը կառավարում եր լիբերալների կուսակցությունը, վորն արտահայտում է խոշոր բուրժուազիայի շահերը: Վերջինս չկարողացավ վոչինչ անել ժողովրդական տնտեսության վերականգնման համար և յերկրի ներսում բանվորա-գյուղացիական հեղափոխական շարժման դեմ: 1928 թվին դրությունը փրկելու յեկան «նացիոնալ-ցարանիստները», վորը ճիշտ թարգմանությամբ նշանակում է «ազգային-գյուղացիական կուսակցության անդամներ»: Ռումինիայի նացիոնալ-ցարանիստական կուսակցությունը փաստորեն կուլակային կուսակցություն է, վորն արտահայտում է նույնպես քաղաքային բուրժուազիայի նոր խավերի շահերը: Նա բաղկացած է յերեք հիմնական մասից. «Գյուղացիական կուսակցություն» (հին պետությունը), «Ազգային ցարանիստները» (Տրանսիլվանիա) և «Գյուղացիական-դեմոկրատական» կուսակցություն (Բեսարաբիա): 1928 թվից մինչև 1931 թիվն այդ յերեք թևը միացվեցին և աշխատելով Մանիուի ղեկավարությամբ, ստացան «նացիոնալ-ցարանիստներ» ընդհանուր անունը, գործադրելով աշխատավորական մասսաների խաբեյության բազմազան ու նուրբ միջոցներ:*

*Լիբերալների դեմ մղած պայքարում, սուտ խաբեյությունների ոգնությամբ նացիոնալ-ցարանիստներին հաջողվեց իրենց ազդեցությանը յենթարկել գյուղացիության բավական լայն մասսաներին և մինչև իսկ բանվոր դասակարգի վորոշ խավերին: Նրանք հույս ունեյին, վոր, յերբ*

իշխանության գլուխ անցնի այդ կուսակցությունը, Ռումինիայում կոկոլի «դեմոկրատիայի», ազգային ազատության, ոստիկանության և պահպանողական բաժնի (սիգուրանցայի) կամայականության դեմ, կաշառակերության դեմ, չարաշահությունների դեմ պայքարի ժամանակը: Շնորհիվ այդ խոստումների, և մինչև անգամ տերրորի օգնությամբ, նացիոնալ-ցարանիստներին 1928 թվին հաջողվեց պարլամենտական ընտրություններում մեծամասնություն ստանալ (481 տեղից 349 տեղ): Սակայն հենց որ նացիոնալ-ցարանիստներն իրենց ցույց տվեցին գործով, նրանց ազդեցությունն արագ թուլացավ: Յերկրի տնտեսական դրությունը վոչնչով չբարելավվեց, և այժմ ամբողջ ժողովրդական տնտեսությունը խեղդվում է դաժան ճգնաժամի ճիրաններում: Հատկապես հենց նացիոնալ-ցարանիստների իշխանության օրոք սկսվեցին դասակարգային խոշորագույն մարտերը:

Նացիոնալ-ցարանիստները ներկայացան մասսաների առաջ, վորպես ամենաիսկական Փաշիստներ: 1930 թվի գարնանը նրանք յետ կանչեցին ռումինական գահի համար թագաժառանգ Կարոլին, վորին առաջ վտարել էին լիբերալները:

1931 թվին Կարոլը նշանակեց նոր կառավարություն Փաշիստ Իորգի գլխավորությամբ: Նոր կառավարությունն իրեն խնդիր է առաջադրում բացահայտ ռազմափաշիստական յեղանակով ճնշել հեղափոխական շարժումը և է՛լ ավելի ուժեղացնել հակախորհրդային պատերազմի պատրաստությունը: Այդ նպատակով շատ կենտրոններում հեռացվեցին հին պաշտոնյաները և նշանակվեցին նորերը (մեծ մասամբ զինվորականներ): Բեսարաբիայում մինիստր նշանակվեց գեներալ Ռեշկանուն, վորն ունի շտաբ 14 սպայից բաղկացած, իսկ ինը պաշտոնյաներից (պրեֆեկտներից) չորսը գեներալներ են:

Հունիսին կայացան պարլամենտի ընտրությունները: Իորգի կառավարությունն ամեն տեսակ խորամանկություններով, կաշառքներով ու գլխավորապես տերրորի միջոցով ապահովեց իրեն համար պարլամենտում տեղերի մեծամասնություն: Չնայած դաժան տերրորին, վորին յենթարկվեց գլխավորապես կոմկուսակցությունը, այնուամենայնիվ բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը և ազգային փոքրամասնությունների աշխատավորությունը՝ «բանվորա-գյուղացիական բլոկը» մասնակցություն ցույց տվեցին ընտրություններին: Ընտրություններին այդ բլոկն ստացավ 72 հազար ձայն և 4 տեղ պարլամենտում: Ռումինական բուրժուազիան, վորը չէր կարողացել լրիվին զրկել Ռումինիայի բանվորներին ու գյուղացիներին՝ ընտրությունների ժամանակ կոմկուսակցության իրենց համակրանքը ցույց տալու հնարավորությունից, վերացրեց նրանց պարլամենտական մանդատները, պատրվակ բռնելով, թե բանվորագյուղացիական բլոկի պատգամավորներն օտարերկրացիներ են: Այդ կոպիտ կամայականության ակտում Իորգի Փաշիստական կառավարությունը լիակատար օգնություն գտավ ռումինական սոցիալ-Փաշիստների կողմից:

Ռումինիայի Փաշիստական կառավարությունն է՛լ ավելի սերտորեն մոտեցավ Փաշիստական Լեհաստանին: Զգալիորեն աճում է Ռումինիայում Ֆրանսիական ու անգլիական ռազմամոլների ազդեցությունը: Ֆրան-



ացիներն աշխատում են կատարելագործել ցամաքային բանակը, իսկ անգլիացիք ռազմածովային բազա յեն կառուցում Սև ծովի ափին և ամրացնում են ռումինական ռազմածովային նավատորմը:

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Ռումինական խաղաղ ժամանակվա զինված ուժերն ունեն 212 հազար մարդ: Յեթե դրան ավելացնենք սահմանամերձ պահակի ու ժանդարմերիայի 29 հազար հոգուն, այդ կկազմի ընդհանուր թվով 241 հազար հոգի: Այդպիսով ունենալով 18.024.269 բնակչություն, 1 զինվորն ընկնում է քաղաքացիական բնակչության 74 հոգուն: Խաղաղ ժամանակվա ցամաքային բանակը բաղկացած է 70 հետևակ գնդից, 6 լեռնահրաձգային գնդից, 1 ժանդարմական գնդից, 6 սահմանապահ գնդից, 21 հեծգնդից, 42 թեթև հրետագնդից, 2 լեռնահոբիցային հրետագնդից, 2 զենիթային հրետագնդից, 7 ծանր հրետագնդից և 10 հրետաբաժնյակից:

Բացի դրանից, ցամաքային բանակն ունի ճարտարապետական-տեխնիկական զորքեր, վորոնք բաղկացած են սապյորներից, պոնտոններից, յերկաթուղային զորքերից, կապի զորքերից ու զրահապատ ուժերից: Զրահապատ ուժերը բաղկացած են 4 զրահագնացքից, 75 տանկից ու 40 զրահավտոմոբիլից:

Քիմիական զորքերը բաղկացած են 1 քիմիական վաշտից: Ավիացիան ունի մոտ 430 սավառնակ, վորից 150-ը՝ վարժական: Ծովային ռազմական նավատորմում կա 47 նավ: Առայժմ նա զգալիորեն յետ է մնում մեր Սևծովյան ռազմական ուժերից: Այս տարի ջուր են իջեցվելու յերկու նոր ռազմանավ և բազա-նավ է կառուցվում սուզանավերի համար:

Պատերազմի ժամանակ ռումինական բանակը կունենա 1 միլիոն 100 հոգի: Այդ բանակի սպառազինման վրա կլինի 15 հազար ձեռքի գնդացիր, 10 հազար հաստոցավոր գնդացիր, 4 հազար զանազան հրանոթներ և 300 զրահավտոմոբիլ: Սավառնակների, տանկերի և ավտոմոբիլների թիվը նույնպես զգալիորեն կավելացվեն՝ շնորհիվ խոշոր իմպերիալիստական պետությունների օգնության:

## ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խաղաղ ժամանակ այդ բոլոր զորամասերը պահվում են կրճատված կազմով և այդ պատճառով ունեն տարբեր կազմակերպություն: Օրինակ՝ հետևակային գնդերն ունեն յուրաքանչյուրը 1, 2 և 3 գումարտակ: Պատերազմի ժամանակ ռումինական զորամասերը կունենան հետևյալ կազմակերպությունը.—

Հետևակ գունդ—3 գումարտակային կազմ, ավելացրած 4 հրանոթային մարտկոց. գումարտակները՝ 3 հրաձիգ ու 1 գնդացրային վաշտից ու 2 ուղեկցող հրանոթ: Վաշտերը բաղկացած են 4 հրաձգային ու 1 գնդացրային դասակներից: Դասակը բաղկացած է յերեք խմբակից, խմբակը՝ հրաձգային ու թեթև գնդացրային օղակներից: Գնդացրային վաշտում՝ 16 հաստոցավոր գնդացիր:

Հեծգունդը բաղկացած է 2 բաժնյակից, յուրաքանչյուրում՝ 2 եսկադրոն. եսկադրոնը՝ 4 դասակից, դասակը 2 սեկցիայից (ջոկերից)— հրացանա-գնդացրային ու թրավոր:

Թեթև թնդանոթային հրետագնդերը պետք է լինեն 3 բաժնյակի կազմից, յուրաքանչյուրում 3 կամ 4 հրանոթային մարտկոց: Բայց իրականում միջոցների պակասության հետևանքով վոչ բոլոր գնդերն ունեն սահմանված քանակով թնդանոթներ:

Թեթև հոբիցային գնդերը պետք է ունենան 2 բաժնյակ, նույնպիսի կազմակերպություն ունի նաև ծանր հրետանին: Հեծյալ հրետ բաժնյակներն ունեն 12 թնդանոթ:

Տեխնիկայի տեսակետից ռումինական բանակն ընդօրինակում է ֆրանսիականին:

Ռումինիայում գոյություն ունի ընդհանուր զինապարտության օրենք: Իսկական ծառայությունը պետք է տևի 2 տարի, բայց դրամական դժվարությունների հետևանքով ծառայությունը տևում է 15—18 ամսից վոչ ավելի: Ենթասպայական կազմը լրացվում է սոսկականների նշանակման միջոցով, գլխավորապես՝ կուլակ և ունևոր ռումինացիներից: Կապրալի (ոդակի հրամ.) կոչում կարող է ստանալ յուրաքանչյուր սոսկական, վորը ծառայել է շարքում վոչ պակաս քան 6 ամիս և քննություն է բռնել: Սերժանտի (ջոկի հրամանատարի) կոչում կարելի յե ստանալ կապրալի կոչումով 6 ամիս շարային ծառայությունից և վարժական խումբը (գնդային դպրոցն) ավարտելուց հետո: Պլուտոնյեր և պլուտոնյեր-մաժոր (դասակի հրամանատարի ոգնական և ավագ) կարող են լինել միայն գերակետիկները:

Սպայական կորպուսը լրացվում է բացառապես բուրժուական ու կալվածատիրական խավերից:

Սպայական աստիճանները ռումինական բանակում նույնն են, ինչ և լեհական բանակում: Միայն թե չկան «մարշալի» և «լրիվ գեներալի» աստիճաններ, վորոնց փոխարեն կա «կորպուսի գեներալի» աստիճան:

Մինչև համաշխարհային պատերազմը, ռումինական բանակն 5 տոկոսով բաղկացած եր ռումինացիներից: Մի շարք նոր մարզերի բռնի միացումից հետո, բանակի ազգային կազմը խստիվ փոխվեց: Սոսկական կազմի մեջ ներկայումս կա մոտ 60 տոկոս ռումինացի, մինչև 10 տոկոս հունգարացի, 8 տոկոս մոլդովացի, 8 տոկոս բեսարաբցի, 4 տոկոս գերմանացի և մոտ 10 տոկոս այլ ազգություններ:

Սպայական կազմն ավելի միատարր է. մոտավորապես 80 տոկոսը՝ ռումինացի, 10 տոկոսը հունգարացի ու գերմանացի և 10 տոկոս այլ ազգություններ, վորոնց թվում բազմաթիվ սպիտակ գվարդիական սպաներ:

Սոսկական կազմն 80 տոկոսով բաղկացած է գյուղացիներից, 8 տոկոսով բանվորներից և 12 տոկոսով դասակարգային այլ խավերից:

Ռումինիայի աշխատավոր մասսաների դժգոհությունը չի կարող չարտածվել բանակի գյուղացիական ու բանվորական կազմի մեջ: Այդ պատճառով զինվորների քաղաքական տրամադրությունը շատ քիչ է համապատասխանում բուրժուազիայի ցանկություններին: 1930 թվին ձերբակալված ու դատի եյին տրված շատ կոմյերիտական զինվորներ: 1931 թվի մայիսի 1-ին մի շարք կայազորներում զինվորների ձերբակալու-



թյուններ եյին կատարված գաղտնի ժողովներում մասնակցելու համար: 1931 թվի ռեկրուտների զորակոչի ժամանակ Բեսարաբիայի միքանի քաղաքներում զինվորները ցույցեր կազմակերպեցին փողոցներում կարմիր դրոշակներով և «Ինտերնացիոնալ» յերգելով:

## ՌԱԶՄԱ-ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհանգստությունը բանակի կայունության համար ստիպում է ռումինական բուրժուազիային բացի բանակից, ստեղծելու հավատարիմ ուժեր՝ ֆաշիստական կազմակերպությունների ձևով: Ներկայումս Ռումինիայում կան հետևյալ խոշոր ռազմաֆաշիստական միությունները. «Վոյնիչներ» կամ «Պահակայիններ» մոտ 250 հազար հոգի, առավելապես կուլակներից ու յենթակուլակներից, վորոնք հանդիսանում են նացիոնալ-ցարանիստների հենարանը. «Կեյմարիստներ»—մարտական զորակոչի կազմակերպության անդամներ, վորոնց թիվը հասնում է 15 հազար հոգու—ֆաշիստական ուսանողության և պետական աստիճանավորների միջից. «Յերկաթե գվարդիա»—մոտ 12 հազար անդամով. «Միքայելի Հրեշտակապետ» միություն—սև հարյուրակային կազմակերպություն. «Պատանի հետախույզների ընկերություն» և այլն: Կան նաև կանանց ֆաշիստական կիսառազմական կազմակերպություններ, ինչպես որինակ՝ «Ռումինական կին-հետախույզների ընկերություն»:

## ԲԱՆԱԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռումինիայում դպրոցները բավականացնում են վոչ ավելի, քան յերեխաների 50 տոկոսի համար: Դրա համաձայն սոսկական կազմի մեջ հաշվվում է 55 տոկոս անգրագետ:

Ենթասպայական կազմն իր կուլտուրական մակարդակով շատ քիչ է տարբերվում սոսկական կազմից: Բարձր չէ նույնպես սպայության հանրակրթական մակարդակը:

Թեև Ռումինիան արտասահման է արտահանում միլիոնավոր փութ հացահատիկ, այնուամենայնիվ ռումինական բուրժուազիան իր զինվորներին կերակրում է առավելապես «մամալիգով» (յեգիպտացորենի ալյուր է շաղախված ջրով ու աղով) և բանջարեղենով: Միս սակավ դեպքերում է տրվում: Պարենավորման համար բաց է թողնվում որական 18 կոպեկ, բայց և այդ դրամը լրիվն չի հասնում մինչև զինվորի կաթսան՝ սպաների չարաշահությունների հետևանքով: Զինվորն ամսական ստանում է ընդամենը 31 կոպեկ ռոճիկ:

Հաճախ զինվորները մուրացկանություն են անում փողոցներում.

Սոսկական կազմի հագուստեղենը վատ է: Հաճախ զինվորներին աշխատանքի յեն ուղարկում կուլակների ու կալվածատերերի մոտ, և այն ժամանակ զինվորների աշխատավարձի մեծ մասը սեփականացնում են սպաները:

Ենթասպայական կազմն ստանում է ամսական 20-ից մինչև 35 ռուբլի: Ռումինական պայմաններում այդ նշանակում է, վոր նա պետք է «կողմնակի յեկամուտ» ունենա, այսինքն՝ գողանա զինվորներից:

Բոլոր զինվորականները ռումինական որենքներով զրկված են ընտրական իրավունքներից: Նրանք, ինչպես և Լեհաստանում իրավունք չունեն մասնակցելու յերկրի քաղաքական կյանքին. սակայն այդ վերաբերում է զինվորների մասսային ու շարքային սպայությանը: Ավագ ու բարձր սպայական կազմը վոչ միայն ակտիվ մասնակցում է ընդհանրապես քաղաքական կյանքին, այլև մասնակցում է հեղաշրջումներին: Կարլիստյան հեղաշրջմանը 1931 թվին,—մասնակցում եյին սպաները: Ռումինացի—սպաների զգալի մասն անդամ է ֆաշիստական կազմակերպությունների: Գեներալներից վոմանք կուսակցությունների գլուխ են կանգնած. որինակ՝ գեներալ Ավերեսկուն Ռումինիայի «ժողովրդական կուսակցության» առաջնորդն է:

Ռումինական բանակի զինվորը վոչ միայն զուրկ է ընդհանուր քաղաքական իրավունքներից, այլև բացի դրանից, սիստեմատիկաբար յենթարկվում է ծաղր ու ծանակի և մարդկային արժանապատվության ստորացման: Թեև ֆիզիկական պատիժները պաշտոնապես վերացված են, փաստորեն այդ պատիժները ծեծի ձևով գործադրվում են համարյա ամեն որ: Ֆիզիկական ծանր տանջանք է հանդիսանում պատիժը «կարցերի» միջոցով: Ներքին ծառայության կանոնադիրքն այդ պատիժը բնորոշում է հետևյալ ձևով.—

«Կարցերի պատժին յենթարկված զինվորները, կապրալները և բոլոր կատեգորիաների այլ յենթասպաները կալանավորվում են նեղ խուցում, առանց լույսի. բաց փորում պատժվածը զրկվում է իր սովորական կերակրից և նրան տրվում է միայն կես բաժին հաց և մի ըմպանակ (կրուժկա) ջուր» (կանոնագրքի § 391-րդ կետ):

Ռումինական բանակում որինականացված են սպաների մոտ սպասյակները (դենշչիկները):

Համաձայն ներքին ծառայության կանոնագրքի 480-րդ կետի գեներալն իրավունք ունի պահելու 3 սպասյակ, ավագ հրամկազմը՝ 2 և միջին հրամկազմը 1 սպասյակ:

Յեթե դրան ավելացնելու լինենք նաև զինվորի նկատմամբ ծաղր ու ծանակը, անձի արժանապատվության ստորացումը (աշխատանքը դաշտերում կալվածատիրոջ մոտ, հասարակական վայրերում զինվորի վոտքի կանգնելուն սպայի տեսնելուն պես և յերբեմն ժամերով նրանից նստելու թույլտվության սպասելը և այլն), ապա զարմանալի չի լինի, թե ինչու ռումինական բանակում այնչափ տարածված է դասալքությունը:

## ԶԻՆՎՈՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Ուժգնորեն պատրաստվելով պատերազմի, ռումինական կառավարությունը բացառիկ ուշադրություն է նվիրում բանակը պատերազմի պատրաստելուն և մասնավորապես՝ զինվորի քաղաքական մշակմանը:

Մինչև 1914—1918 թ.թ. պատերազմը ռումինական բանակում շատ քիչ ուշադրություն եր նվիրվում զինվորի քաղաքական մշակմանը: Պատերազմից հետո դրությունը կտրականապես փոխվում է:

1925 թվից մտցրված են զինվորների բարոյական դաստիարակու-



թյան հատուկ ծրագրեր: 1926 թվին փորձեր են արվում ստեղծելու անհրաժեշտ ձեռնարկներ («Զինվորի գիրք»):

Զինվորի բարոյական դաստիարակության հարցին մեծ ուշադրություն են նվիրում նաև ռումինական ռազմական կանոնադրքերը: Ռումինական բանակի հետևակային՝ 1925 թվի կանոնադրքերը դրան նվիրում է հատուկ բաժին: Այդ բաժնում ասված է, վոր զինվորի բարոյական դաստիարակությունը պետք է ընդգրկի. 1) ռազմական մորալի (բարոյախոսության) դաստիարակությունը, 2) քաղաքացիական ու ազգային—հայրենասիրական դաստիարակությունը, 3) կրոնական դաստիարակությունը և 4) եստետիկ դաստիարակությունը:

Ռազմական բարոյախոսության դաստիարակությունը պետք է զարգացնի յուրաքանչյուր զինվորի մեջ զինվորական քաջարիություն, հարգապահություն, պատիվ, քաջություն և այլն: Միաժամանակ հատուկ ուշադրություն է նվիրվում կարգապահությանը, վորը համարվում է զինվորի բարոյական դաստիարակության հիմքը: Զինվորական կարգապահությունը պետք է զորանոցում գտնվելու առաջին իսկ որերից պատվաստի զինվորի մեջ սովորքներ՝ առանց առարկության հնազանդվելու իր կեղեքիչներին ու դասակարգային թշնամիներին:

Ռազմական բարոյախոսության դաստիարակության հիմքն են կազմում՝ զինվորների կողմից ներքին ու կայազորային ծառայության կանոնադրքերի պահանջմունքների ուսումնասիրությունը ու ճիշտ կատարումը, ռազմական իրավագիտության որենքների յուրացումը: Այդ աշխատանքը տարվում է հրամկազմի կողմից զինվորների հետ անցկացվող հատուկ «զրույցների» միջոցով:

Քաղաքացիական ու ազգային—հայրենասիրական դաստիարակությունը պետք է զարգացնի զինվորների մեջ հարգանքի զգացմունք դեպի բուրժուական պետական որենքները, «արյան պարտքի» զգացմունք դեպի յերկիրը, սեր դեպի ազգը, «հայրենիքը», գահը, բանակը, պետական լեզուն և այլն:

Կրոնական դաստիարակությունը պետք է ներշնչի զինվորին հավատ դեպի աստված, «վորն,—ինչպես ասված է կանոնադրքերում,—ճակատամարտի դաշտերում և մանավանդ դժվարին պարագայում բարոյական ողնություն է ցույց տալիս և զինվորին հնարավորություն է տալիս կատարելու իր պարտքը»: Կրոնական դաստիարակությունն առաջադրվում է իրականացնել քահանաների քարոզներով և կանոնավոր կերպով ժամասացություններ հաճախելով:

Զինվորների մեջ «բարոյական ուժի» զարգացման նպատակով հանձնարարվում է ամեն որ ստուգման ժամանակ զինվորների հետ պետկազմի կողմից տանել «դաստիարակչական զրույցներ»:

Ստուգման ժամանակ զրույցներով հետապնդվում է յերկու նպատակ. խրախուսել աչքի ընկնող զինվորներին և ազդել անկարգապահների վրա: Ըստ վորում անկարգապահ զինվորներին բաժանում են յերկու խմբի. զինվորներ, վորոնք զինվորական կարգապահությունը խախտել են առանց քաղաքական նկատառումների և զինվորներ, վորոնք կասկածվում են քաղաքական անբարեհուսության մեջ: Վերջիններս սպառնում է առանձնապես անողոք հաշվեհարդար:

Բարձր հրամանատարությունը լուրջ նշանակություն է տալիս սպայի

վարքին: Այդ բացատրվում է նրանով, վոր ռումինական սպաները համեմատած այլ բանակների սպաների հետ աչքի յեն ընկնում հարբեցողությամբ, անբարոյականությամբ և կաշառակերությամբ: Քրեական հանցագործությունները հաճախակի յերևույթ են ռումինական սպայության մեջ: Ռումինական սպան չի սիրում աշխատել. քիչ է հետաքրքրվում զինվորների դաստիարակությամբ: Ռումինական սպաների մեջ առավելին գերակշռում են զինվորի պատրաստության հին յեղանակները, այն է՝ մեծ նշանակություն է տրվում արտաքին շուքին, զորահանդիսային տեսքին: Զինվորին ծաղրի ու ծանակի յենթարկելը, նրան ծեծելը լայն չափով տարածված է ռումինական բանակում:

Ռումինական բանակի առանձին զորամասերում կազմակերպվում են դրամատիկ, յերգեցիկ և սպորտի խմբակներ, ըստ վորում դրանք առավելապես բաղկացած են քաղաքային տարրերից՝ վաճառականների զավակներից, ինտելիգենտներից և այլն:

Այդ խմբակների ուժերով բեմադրվում են փոքրիկ պիեսներ: Այդ բեմադրությունների բովանդակությունը բացառապես ռազմական է և նացիոնալ-հայրենասիրական, վորն ուղղված է բոլշևիկների դեմ: Զինվորական հատուկ ակումբներ ռումինական բանակում չկան և բեմադրությունների համար ոգտվում են զինվորական ճաշարաններից:

Զորամասերում կան փոքրիկ գրադարաններ: Այդ գրադարանների գրքույկները բացառապես ռազմական, հայրենասիրական ու կրոնական են:

Հատուկ զինվորական թերթեր ու ամսագրեր չեն հրատարակվում և զինվորներին չի թույլատրվում կարդալ վորևէ թերթ:

Գերակետիկ կազմի համար կան հատուկ կայազորային ակումբներ: Այդ ակումբների ղեկավարությունը գտնվում է բարձր ու ավագ սպայության ձեռքում: Ակումբային աշխատանքի հիմնական ձևերն են՝ դասախոսությունները զանազան «հայրենասիրական», յերբեմն ռազմական թեմաների շուրջը (կարդում է բարձր և ավագ սպայությունը): Սպաների համար յուրաքանչյուր զորամասում կա կազինո, վորտեղ տարածված է հարբեցողությունը, թղթախաղը, պարեր և այլն:

Չնայած նրան, վոր կոմունիստական կուսակցության աշխատանքը ռումինական բանակում տարվում է անլեգալ ձևով և չափազանց ծանր պայմաններում, նա անցնում է վոչ անհաջող: Այսպես օրինակ՝ 1930 թվի աշնանը թագավորական մեծ մանյովրներում տարածված եյին մեծ քանակությամբ կոմունիստական թռուցիկներ: Զինվորները մեծ հետաքրքրությամբ կարդում եյին այդ թռուցիկները և կոմունիստական լոզունգներ փակցնում մարտական սավառնակների վրա: Նույն այդ մանյովրներում զինվորներն ամբողջ ստորաբաժանումներով հրաժարվում եյին վոչ թարմ կերակուր ընդունելուց: Միքանի դեպքերում զինվորները հրաժարվում եյին ուժեղացրած յերթերից և այլն: Կարգապահությունը մանյովրներում ավելի քան անբավարար եր: Ընդհանրապես կարգապահությունը ռումինական բանակում խիստ կաղում է: Զինվորները դասալքում են վոչ միայն մի-մի հոգով, այլև ամբողջ խմբերով: 1931 թվի մայիսի 1-ին ռումինական բանակի մի շարք զորամասերում զինվորների նախաձեռնությամբ կազմակերպված եյին մայիսմեկյան միտինգներ:



Այս բոլորը վկայում են ռումինական բանակում կոմկուսակցության ազդեցության աճման մասին:

Հրամանատարությունը ձեռք է առնում բոլոր միջոցները, վորպեսզի գտնի նախաձեռնողների, ագիտատորների անունները, սակայն ապարդյուն են անցնում այդ միջոցները: Այդ նույնպես վկայում է այն մասին, վոր ռումինական զինվորն սկսել է հասկանալ կոմկուսակցության ու կոմսոմոլի իսկական նշանակությունը:

## ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ԼԱՏՎԻԱՆ, ԵՍՏՈՆԻԱՆ ՈՒ ՖԻՆԼԱՆԴԻԱՆ

Մերձբալթյան պետությունները հեղափոխությունից առաջ մտնում եյին ցարական Ռուսաստանի կազմի մեջ և ինքնուրույնություն ստացան միայն Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով:

Ֆինլանդիայում 1918 թվին պրոլետարիատն ու չքավորագույն գյուղացիությունն իրենց կոմկուսակցության ղեկավարությամբ իշխանությունը խլեցին բուրժուազիայի ձեռքից, ստեղծեցին Կարմիր գվարդիա և յերկրի հարավային մասում հաստատեցին խորհրդային իշխանություն: Սվինխուվուդի (այժմյան նախագահն է դարձյալ) բուրժուական կառավարությունը փախավ Վազա քաղաքը և այնտեղից գերմանական բանակի զորամասերի ոգնությամբ (Գերմանիայում այն ժամանակ դեռ հեղափոխություն չկար) հարձակում սկսեց ֆիննական Կարմիր բանակի դեմ: Վերջինս չնայած իր հերոսական դիմադրության, ջախջախվեց, և ֆիննական աշխատավորները կորցրին տասնյակ հազարավոր սպանվածներով ու խոշտանգվածներով: Ֆիննական հակահեղափոխության հաջողությունը բացատրվում է վոչ միայն այն ոգնությամբ, վոր նա ստացավ գերմանական իմպերիալիզմից, այլև ֆիննական սոցիալ-դեմոկրատների դավաճանությամբ, վորոնք բացահայտորեն անցան բուրժուազիայի կողմը:

Լատվիայում և Եստոնիայում նույնպես փորձեր յեղան խորհրդային իշխանություն հաստատելու համար: Սակայն այստեղ եվ բուրժուազիան հաղթեց, ոգնություն ստանալով գերմանական իմպերիալիստներից ու իր սոցիալ-դեմոկրատներից:

Մերձբալթյան յերկրների բուրժուազիան այդ պետությունների ինքնուրույնության առաջին իսկ որերից թշնամական քաղաքականություն է վարում ԽՍՀՄ հետ: Մեր հեղափոխության առաջին տարիներում լատվիական բանակը պայքար է մղել Կարմիր Բանակի հետ: Եստոնիան նույնպես մասնակցություն ցույց տվեց մեր դեմ մղած պայքարին: Նրա տերիտորիայում կազմակերպվեց գեներալ Յուդենիչի սպիտակ բանակը: Ֆինլանդական բուրժուազիան մասնակցեց մեր դեմ զինված յելույթներով: Մեզ հետ հաշտություն կնքելուց հետո (1920 թ.) նա կազմակերպեց կուլակային ապստամբություն Խորհրդային Կարելիայում:

Մերձբալթյան յերկրները կապված են իրար հետ (ու Լեհաստանի հետ) դաշնագրերով, վորոնք ուղղված են մեր դեմ:*)

---

*) Ամենավերջին ժամանակներում ԽՍՀՄ չհարձակման դաշնագիր է ստորագրել Ֆինլանդիայի և Լատվիայի հետ:

Առավելագույն մեծ թշնամություն է տածում դեպի ՍՍՀՄ ֆինլանդական բուրժուազիան, վորը ձգտում է գրավել Խորհրդային Կարելիան: Այդ թշնամությունն առանձնապես արտահայտվում է վերջին ժամանակներս, յերբ Ֆինլանդիայում հաստատվել է բացահայտ ֆաշիստական դիկտատուրա:

Լատվիայի ու Եստոնիայի բուրժուազիան նույնպես թշնամաբար է տրամադրված դեպի ՍՍՀՄ: Այդ փոքր պետությունների տնտեսական թուլությունը նրանց կախման տակ է դնում արտասահմանյան կապիտալից: Ռազմական տեսակետից այդ փոքր պետությունները մեզ համար իրենցից ներկայացնում են զգալի վտանգ, քանի վոր նրանց դասավորությունը հնարավորություն է տալիս խոշոր յերկրներին օգտագործելու Բալթիկ ծովի ափերն իրենց զորքերի ափ իջեցնելու և ՍՍՀՄ դեմ հարձակվելու համար: Այն մասին, թե ինչպիսի ռեալ վտանգ գոյություն ունի վկայում են նաև ֆրանսիական և անգլիական սպաների՝ դեպի այդ յերկրները կատարած հաճախակի շրջագայությունները:

## ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մերձբալթյան յերկրներից ամենախոշոր պետությունը Ֆինլանդիան է: Իր տարածությամբ նա հավասար է Լեհաստանին (388,2 հազար քառակուսի կմ.), սակայն ունի ընդամենը 3,5 միլիոն բնակչություն:

Յերկրորդ տեղը գրավում է Լատվիան 66 հազար քառակուսի կմ. և 2 միլիոն բնակչությամբ: Ամենափոքրն Եստոնիան է, վորն ունի ընդամենը 47,5 հազար քառ. կմ. տարածություն և 1,2 միլիոն բնակչություն:

Ազգային կազմի տեսակետից Մերձբալթյան յերկրների բնակչությունը բավական միատարր է:

Բնակչության կուլտուրական մակարդակն ընդհանուր առմամբ բարձր է. Ֆինլանդիայում բնակչության 83 տոկոսն է գրագետ, Լատվիայում՝ 80 տոկոսը, Եստոնիայում գրագետ է բնակչության 98 տոկոսը:

Բոլոր Մերձբալթյան յերկրները հողագործական պետություններ են: Այդ պետություններում 1918—1920 թ.թ. անց է կացրված հողային ռեֆորմ, վորի նպատակն է ստեղծել կուլակային տնտեսություններ: տընտեսությունը:

Ֆինլանդական գյուղացիությունը հողի սուր կարիք է զգում: 385 հազար ծուխից 20 տոկոսը միանգամայն զուրկ է հողից, իսկ 40 տոկոսն ունի չափազանց մանր հողաբաժիններ: Միջակները կազմում են ծուխերի համարյա $1/3$ մասը: Հողազրկության մասին վկայում է այն փաստը, վոր հողագործությամբ զբաղվող 2 միլիոն բնակչությունից 63 տոկոսը կազմում են բատրակները, սեզոնային բանվորներն ու վարձականները:

Լատվիայում չքավորագույն գյուղացիությունը կազմում է ծուխերի $1/5$ մասը: Եստոնիայում հողազուրկ ծուխերը կազմում են մեկ վեցերորդ մասը և $2/3$ մասը կազմում են չքավորներն ու միջակները:



Այսպիսով այս բոլոր պետություններում կան ունևոր ու կուլակային հուժկու խավ և բատրակության ու չքավորության նշանակալից կադրեր: Այդ դասակարգային սրված հարաբերությունների պատճառ է լինում գյուղում:

Ամենագլխավոր գյուղատնտեսական մշակույթները հանդիսանում են վարսակը, տարեկանը (ռոժ), գարին ու կարտոֆիլը: Տեխնիկական մշակույթներից նշանակալից տեղ է գրավում կտավատը, վորը մեծ քանակությամբ արտահանվում է արտասահման:

Սեփական հացը չի բավականացնում մինչև իսկ լավ բերքի ժամանակ:

Մերձբալթյան բոլոր յերկրներում չափազանց զարգացած է անասնապահությունը, մանավանդ կաթնատնտեսությունը:

Վերջին յերեք տարիների ընթացքում Ֆինլանդիայի, Լատվիայի ու Եստոնիայ գյուղատնտեսությունը գտնվում է ծանր ճգնաժամի մեջ, վորն առաջացնում է չքավոր տնտեսությունների համատարած քայքայում: Գյուղացիական դրությունը վատթարանում է բարձր հարկերով ու տուրքերով, վորոնք միքանի անգամ գերազանցում են նախապատերազմյան չափերին: Աճում են տնտեսությունների վաճառքի դեպքերը պարտքերի չվճարման համար: Այն ժամանակ, յերբ Լատվիայում 1925 թվին աճուրդով վաճառված եր միայն 71 տնտեսություն, 1929 թվին այդ թիվը հասավ 1376 տնտեսության:

Ինչպիսի՞ն է Մերձբալթյան յերկրների արդյունաբերությունը:

Ֆինլանդիայում խիստ զարգացած է անտառային-թղթի արդյունաբերությունը, վորի մեջ զբաղված է 75 հազար բանվոր: 1928 թվին Ֆինլանդիան գերիշխող տեղ է բռնել յեվրոպական յերկրներին անտառանյութեր հայթայթելու մեջ: Սակայն հետագա տարիներում մեր անտառարդյունաբերության զարգացման ու համաշխարհային ճգնաժամի սկսվելու հետևանքով Ֆինլանդիայի նշանակությունն զգալիորեն ընկավ: Ներկայումս անտառային-թղթե արդյունաբերության արտադրանքը Ֆինլանդիայում 1928 թվի համեմատությամբ կրճատվել է յերեք անգամ:

Մետաղաձուլական ու տեքստիլ արդյունաբերությունը, վորի մեջ զբաղված է 40 հազար հոգի, սպասարկում է միայն ներքին շուկան: Ներկայումս այդ ճյուղերը նույնպես գտնվում են դաժան ճգնաժամի մեջ:

Ֆինլանդիան ունի սեփական ռազմական արդյունաբերություն, վորը համարյա լիովին բավարարում է բանակի խաղաղ ժամանակվա պահանջները փամփուշտների ու պայթուցիկ նյութերի տեսակետից: Պատերազմի ժամանակ այդ արտադրանքը չի բավարարի:

Լատվիայի ու Եստոնիայի արդյունաբերությունը զարգացել է ժամանակին, շնորհիվ նրան, վոր սպառման լայն շուկաներ կային նախկին ցարական Ռուսաստանում: Յերբ այդ պետությունները կտրվեցին իրենց բնական-տնտեսական բազայից, նրանց արդյունաբերությունն ընկավ: Լատվիայի ու Եստոնիայի խոշորագույն գործարանները մասամբ անհայտացան, մասամբ ել սաստիկ կրճատեցին իրենց արտադրանքը:

Լատվիայում առաջին տեղն է բռնում փայտագործական արդյունաբերությունը, որի մեջ զբաղված է 13 հազար հոգի, և որը տալիս է երկրի ամբողջ արտահանության արժեքի 40 տոկոսը: Այնուհետև գալիս է մետաղաձուլական արդյունաբերությունը (անցյալում խիստ ուժեղ զարգացած) 10 հազար բանվորով, հետո՝ տեքստիլն ու քիմիականը:

Էստոնիայում ամենից աչքի ընկնող տեղ է բռնում տեքստիլ արդյունաբերությունը (10 հազար բանվոր), մետաղաձուլական արդյունաբերությունը (5 հազար բանվոր), փայտագործականն ու թղթի արդյունաբերությունը:

Ներկայումս արդյունաբերության բոլոր ճյուղերը թե՛ Լատվիայում և թե՛ Էստոնիայում գտնվում են ամենախոր ճգնաժամի ճիրաններում: Գործազրկությամբ բռնված է արդյունաբերական պրոլետարիատի կեսը:

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Մերձբալթյան երկրների բուրժուազիան աճող ճգնաժամից ելք է փնտրում աշխատավորների անխնա շահագործման, նրանց կենսական մակարդակի իջեցման մեջ:

Ներկայում Ֆինլանդիայում բանվորի աշխատավարձը կազմում է նախապատերազմյանի 45 տոկոսը: Բանվորական օրը, որպես կանոն, բարձր է օրենքով սահմանված 8 ժամից:

Գյուղատնտեսական տղամարդ-բանվորների աշխատավարձն օրական 75 կոպեկից բարձր չէ, իսկ կանանց աշխատավարձը 40—45 կոպեկ է:

Լատվիայում ներկայումս աշխատավարձը կազմում է նախապատերազմյան մակարդակի 30—35 տոկոսը: Գյուղատնտեսական բանվորները վարձատրվում են 2—3 անգամ ավելի պակաս, քան արդյունաբերական բանվորները: Բանվորական օրն արդյունաբերության մեջ հաճախ հասնում է 10 ժամվա:

Էստոնիայում աշխատավարձն է՛լ ավելի ցածր է, քան Ֆինլանդիայում և Լատվիայում, գյուղատնտեսական բանվորներն ու բատրակները կիսաքաղց կյանք են վարում:

Աշխատավոր մասսաների դրությունը վատթարանում է մասսայական գործազրկությամբ, չքավորագույն գյուղացիության քայքայումով, որն ստիպված է չնչին գներով վաճառել իր գույքն աճող հարկերի ու պարտքերի վճարման համար: Գյուղացիության պարտքը հասնում է 1 հեկտար հողին 16 ոսկի ռուբլի Էստոնիայում և 30 ոսկի ռուբլի Լատվիայում:

Կյանքի ծանր պայմաններն առաջացնում են բանվորների ու աշխատավոր գյուղացիական մասսաների մեջ դժգոհության աճում: Հեղափոխական ակտիվության առանձնապես մեծ աճում է նկատվում Ֆինլանդիայում և Լատվիայում:

1928 թվին Ֆինլանդիայում տեղի ունեցավ նավակայանային բանվորների հանրադուլ, որը չնայած սոցիալ-դեմոկրատների կողմից վիժեցնելու փորձերին, տևեց 9 ամիս: Երկարատև ու համառ գործադուլ-



ներ եղան նաև խոշորագույն գործարաններում: Առանձնապես կարևոր է նշել ֆինլանդական բանվորների հեղափոխական ելույթները կոմկուսակցության ղեկավարությամբ 1929 թվի մայիսի 1-ին և Հոկտեմբերյան հեղափոխության վերջին տարեդարձներին:

Հեղափոխական տրամադրությունների աճումն սկսվել է նաև գյուղում: 1930 թվի գարնանը տեղի ունեցավ աշխատավոր գյուղացիների համագումարը, որտեղ որոշված էր ձեռնամուխ լինել գյուղում գործողությունների կոմիտեների կազմակերպմանը: Լատվիայում արդեն իսկ 1928 թվին տեղի յեն ունենում մի շարք գործադուլներ ու ցույցեր: Մինչև իսկ Էստոնիայում, որտեղ պրոլետարական խավը չնչին է, նկատվում է բանվոր դասակարգի ակտիվության աճում, գործադուլների թվի ավելացում: Կոմկուսակցությունների ազդեցությունն ամենուրեք աճում է, չնայած ընդհատակյա գործունեության ծանր պայմաններին, արյունալի հալածանքներին, մահապատիժներին ու դաժան տանջանքներին, որոնց ենթարկվում են կոմկուսակցությունները ֆաշիզմի կողմից:

## ՖԱՇԻԶՄԸ ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Տնտեսական խոր ճգնաժամի ու դասակարգային պայքարի սրման հողի վրա բուրժուազիան Մերձբալթյան երկրներում ձգտում է ֆաշիստական դիկտատուրա հաստատել: Առանձնապես այդ նկատելի յէ Ֆինլանդիայում, որը 1930 թվի կեսերից հաստատել է բացահայտ ֆաշիստական դիկտատուրա: «Լապուացիների» ֆաշիստական շարժումը (այդպես է կոչվում այդ շարժումը Ֆինլանդիայում Լապուա գյուղի անունով, որտեղ կազմակերպված էին ֆաշիստների առաջին բջիջները), բացի ներքին հակահեղափոխական նպատակներից, խնդիր է առաջադրել՝ միացնել երկրի բոլոր հակահեղափոխական ուժերը ԽՍՀՄ դեմ պայքարելու համար: Այդ շարժմանն ամենամոտ մասնակցություն է ցույց տալիս ֆինլանդական գլխավոր շտաբը: Ֆինլանդիայի պրեզիդենտն է ֆինլանդական բանվոր դասակարգի դահիճ ու Խորհրդային Միության ամենավոխերիմ թշնամին՝ Սվինխուվուդը:

Ֆինլանդիայի օրինակին ուզում է հետևել նաև լատվիական բուրժուազիան: Այստեղ նույնպես աշխատանք է տարվում կազմակերպելու և համախմբելու համար ֆաշիստական բանակը, որպեսզի հարմար մոմենտին բացահայտ ֆաշիստական դիկտատուրա հայտարարվի: Էստոնիայում ֆաշիստներն ամրանում են դեռ այն ժամանակվանից, երբ ճնշվեց Ռևելի բանվորների 1924 թ. դեկտեմբերյան ապստամբությունը:

Այդ բոլոր երկրներում նկատվում է ռազմա-ֆաշիստական միությունների ուժեղ աճում: Ֆինլանդական «Շյուցկոր» միությունը համախմբում է իր շարքերում ավելի քան 100 հազար անդամ, որոնք հանդիսանում են ֆաշիստական դիկտատուրայի հենարանը և զորքերի պատրաստի կադրեր են պատերազմի դեպքում: Լատվիայում «Այզսարգսի» ֆաշիստական կազմակերպությունն ունի մոտ 40 հազար անդամ: Մինչև իսկ փոքրիկ Էստոնիան ունի ֆաշիստական «Կայսելիտ» կադրեր՝ մոտ 30 հազար հոգուց բաղկացած:

# ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Բոլոր Մերձբալթյան պետությունների խաղաղ ժամանակվա բանակները մեծ չեն և բանակում ունեն ընդամենը 65—70 հազար հոգի։

Սակայն այդ յերկրների բնակչության թվի համեմատությամբ այդ յերկրների բանակները չափազանց մեծ են,—ֆիննական բանակը՝ 30 հազար մարդ, կամ 1 զինվոր բնակչության 116 հոգուն. լատվիական բանակը՝ 20 հազար մարդ, կամ 1 զինվոր բնակչության 100 հոգուն, էստոնական բանակը՝ 15 հազար մարդ, կամ 1 զինվոր բնակչության 75 հոգուն։

Ֆինլանդական խաղաղ ժամանակվա զինված ուժերի կազմի մեջ մտնում են. հետևակի 8 գունդ և 6 առանձին գումարտակ, 3 հեծանվային գումարտակ, 2 հեծգունդ, 4 թեթև և 1 ծանր հրետագունդ, 1 տանկային վաշտ, 2 զրահագնացք և ճարտարապետական–տեխնիկական զորքեր։ Ավիացիան ունի 85 մարտական սավառնակ։ Ծովային նավատորմը բավական խոշոր է (30 նավային միավոր), բացի դրանից, «Շյուցկոր» ռազմա-ֆաշիստական կազմակերպությունն ունի ուժեղ ծովափնյա նավատորմ։

Լատվիական բանակն ունի՝ 12 հետևակ գունդ, 1 հեծգունդ, 5 հրետագունդ, 50 տանկ ու զրահամեքենա, 4 զրահագնացք և ճարտարապետական–տեխնիկական մասեր։ Ավիացիան ունի 55 մարտական սավառնակ։ Ռազմածովային նավատորմն ունի 5 նավային միավոր, վորի թվում 2 սուզանավ։

Էստոնական բանակն ունի՝ 7 հետևակ գունդ, 1 հեծգունդ, 6 հրետամասնյակ, 40 տանկ ու զրահամեքենա, 4 զրահագնացք և ճարտարապետական–տեխնիկական զորքեր։ Ավիացիան ունի 60 մարտական սավառնակ։ Ծովային նավատորմն ունի 9 ռազմանավ։

Զորքերի կազմակերպությունը համարյա ամենուրեք միատեսակ է։ Հետևակ ու հեծգնդերի թվական քանակը մոտավորապես նույնն են, ինչ մեզանում։

Բանակի պատրաստությունը բոլոր այդ յերկրներում դրված է բավականաչափ բարձր մակարդակի վրա։ Ֆինլանդական բանակում լավ ուսումնասիրվում են անտառային վայրերի գործողությունները, զորամասերը լավ վարժվում են ձմրան պայմաններում գործողությունների մեջ։ Լատվիական և Էստոնական բանակներում մեծ ուշադրություն է նվիրվում լայն ճակատներով գործողություններին։

Բանակների համալրումը կատարվում է ընդհանուր զինապարտության հիման վրա։ Զինվորական ծառայության ժամկետը Ֆինլանդիայում սահմանված է հետևակի համար 1 տարի, իսկ այլ զորքերի համար 15 ամիս. Լատվիայում և Էստոնիայում՝ 18 ամիս։

Ծառայության կանչվողները ֆինլանդական բանակում բաժանվում են 3 խմբակի՝ առաջին հերթին՝ «միանգամայն հուսալի» խմբակ, վորի մեջ մտնում են «Շյուցկոր» ֆաշիստական կազմակերպության անդամները և բուրժուական ընտանիքների յերիտասարդությունը. յերկրորդ խմբակը կազմում են անկուսակցական բանվորները, յերրորդ խմբակն է՝ «կոմունիստական խմբակը»,—«կոմունիստներն ու նրանց համակրողները»։ Առաջին խմբակի զորակոչիկները նշանակվում են տեխնի-



կական ու մասնագիտական զորամասերի մեջ, յերրորդ խմբակից բանակ ընկնել չի կարելի (նրանից բանտերն են ընկնում), քանի վոր կոմունիստներն ընդհատակյա գործունեության են մատնված և պահանորդական բաժինը (ախրանկան) աչալրջորեն հետևում է, վորպեսզի բանակ չսողոսկի «հանցագործ» տարրը։

Յենթասպայական կազմը Ֆինլանդիայում համալրվում է սոսկական կազմի կուլակային–ունևոր այն մասից, վորն ավարտել է գնդային դպրոցը և ունի համապատասխան ընդհանուր կրթություն։ Գոյություն ունեն հետևյալ կոչումները՝ կապրալ (ավագ զինվոր), կրտսեր սերժանտ (ջոկի հրամանատար), սերժանտ (դասահրամի օգնական) և ֆելդֆեբել (ավագ)։ Սերժանտ ու ֆելդֆեբել կարող են լինել միայն գերժամկետները, վորոնք ավարտում են գերժամկետ յենթասպաների հատուկ դպրոց։

Լատվիայում գոյություն ունեն հետևյալ յենթասպայական կոչումներ. կապրալ (ջոկի հրամանատար), սերժանտ (դասակի հրամանատարի օգնական) և ավագ սերժանտ (ավագ)։ Նրանք համալրվում են քաղաքականապես «բարեհույս» և դասակարգայնորեն ջոկված սոսկականներից, վորոնք ավարտել են վեցամսյա գնդային դպրոցները։

Էստոնիայում յենթասպայական կազմը պատրաստվում է հատուկ դպրոցներում։ Դասակարգային ընտրանքն այս բոլոր խմբակներում չափազանց խիստ է։

Մերձբալթյան յերկրների բանակներում սպայական կազմը համալրվում է, ի հարկե, բուրժուազիայից։ Այս բոլոր բանակներում կան նախկին ցարական բանակի բազմաթիվ սպիտակ ռուս սպաներ։

Հարկավոր է հիշել, վոր Մերձբալթյան յերկրների բանակների կուլտուրական մակարդակը բարձր է, վորը բացատրվում է գրագետ բնակչության բարձր տոկոսով։

Ինչպիսի՞ զինված ուժեր ունեն ԽՍՀՄ Մերձբալթյան հարևանները և ինչպիսին է այդ ուժերի դրությունը։

# ՆՅՈՒԹԱԿԱՆ—ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Զինվորների նյութական-կենցաղային դրությունն ամենից նպաստավոր է Լատվիայում։ Այստեղ զինվորի օրապահիկի արժեքը սահմանված է 39 կոպեկ։ Սակայն հանձնակի չարաշահումների հետևանքով զինվորների սնունդն ավելի վատ է, քան թե կարող եր լինել։

Ֆինլանդական ու Էստոնական բանակներում զինվորի օրապահիկն ավելի ցածր է, քան Լատվիայում։ Այստեղ ևս այդ օրապահիկը լրիվին չի հասնում զինվորին, նվազելով ճանապարհին սպաների ու յենթասպաների ձեռքում։

Հագուստեղենը բոլոր բանակներում բավարար է։ Զորանոցային պայմանները չափազանց ծանր են։ Զորանոցները քիչ են, զորանոցները հաճախ տեղավորվում են ցուրտ «բարակներում»։

Բոլոր այդ բանակներում զինվորականներին կտրականապես արգելված է անդամ լինելու վորևէ քաղաքական միությունների ու խմբ-

բակների (բացառությամբ ֆաշիստական կազմակերպությունների), արգելված է ներկա լինել քաղաքական ժողովներում կամ մասնակցել ցույցերին:

Ֆինլանդական ու եստոնական բանակներում զինվորականները վայելում են ընտրական իրավունքներ, սակայն վորովհետև պարլամենտի համար կարող են ընտրվել վոչ պակաս քան 25 տարեկանները, ուստի փաստորեն իսկական ծառայության սոսկական կազմը չի կարող ընտրվել:

Վորպես կանոն, բոլոր այդ բանակների զինվորներն անլեզու ավտոմատներ են, վորոնց շատ հաճախ ծաղր ու ծանակի յեն յենթարկում սպաներն ու յենթասպաները:

Ֆինլանդական բանակում կարգապահությունը գերմանական հին բանակի կարգապահության ճիշտ պատճենն է, վորն աչքի յե ընկնում իր դաժանությամբ ու զինվորների նկատմամբ ծանակով: Ահա թե ինչու Ֆինլանդական բանակում բավական հաճախակի յեն ծանակի հողի վրա զինվորների ինքնասպանության դեպքերը:

Լատվիական բանակում սոսկական ու հրամանատարական կազմի մեջ փոխհարաբերությունները համապատասխանում են նրանց դասակարգային տարբերության:

Եստոնական բանակում սոսկական կազմի ուսուցումն ու դաստիարակությունը հիմնված է զգալի չափով կալանքների, կարցերների, դիսցիպլինար վաշտերի ու բանտերի վրա: Գործադրվում է նաև ծեծը...

## ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՔԱՂՄՇԱԿՈՒՄԸ

Զինվորական մասսայի քաղմշակումը նպատակ ունի զինվորներին յենթարկել սպայական կազմի իդեական ազդեցությանը և այդպիսով իսկ զինվորին դարձնել հլու գործիք՝ բուրժուազիայի ներքին ու արտաքին թշնամիներին ճնշելու համար: Նրա համապատասխան քաղմշակման բովանդակությունը համակված է բուրժուական հասարակակարգի մըշտական գոյության մտքերով, ատելությամբ դեպի ԽՍՀՄ: «Դաստիարակության» եական պատկանելիքն է կրոնը:

Պարզ է, վոր ամբողջ այս մշակումը սաստիկ հակասում է զինվորական մասսայի շահերին, վորն իր ճնշող մեծամասնությամբ բաղկացած է բանվորներից ու գյուղացիներից: Այստեղից էլ բխում են այդ մշակման ցածր արդյունքները:

Ֆինլանդական բանակում զինվորների քաղմշակումը տարվում է «կուլտլուսաշխատանքի» անվան տակ: Այդ մշակումը ղեկավարում է քահանան: Ֆինլանդական բուրժուազիայի խնդիրների պրոպագանդը տանում են սպաներն ու ռազմական պաստորները (քահանաները): Գործադրվում են «զրույցներ», դասախոսություններ, զեկուցումներ: Կրոնական պրոպագանդը կարևոր տեղ է գրավում: Տոն օրերին յեկեղեցի հաճախելը զինվորների համար պարտադիր է: Պարտադիր են նույնպես ամեն օր առավոտյան ու յերեկոյան աղոթքները: Պարտադիր է կրոնական զրույցների հաճախումը «զինվորական տներում» (ակումբներում): Դպրոցական պարապմունքների համար հատկացվում է ամեն օր (բացի շաբաթ օրերից) 1—2 ժամ: Արտադպրոցական աշխատանքը տարվում է



յերեկոյան «զինվորական տներում» և այդ աշխատանքներին մասնակցում են բուրժուական հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև «Շյուցկոր» ֆաշիստական կազմակերպությունը:

Կարևոր դեր են խաղում զինվորական մամուլն ու գրականությունը: Հրատարակվում է «Ֆինլանդական զինվոր» շաբաթաթերթ, վորը պրոպագանդ է մղում բուրժուական, հակախորհրդային գաղափարների համար:

Լատվիական ու եստոնական բանակներում քաղմշակման բովանդակությունը և նրա անցկացման յեղանակները մոտավորապես նույնն են, ինչ ֆինլանդական բանակում:

Բոլոր բանակներում տարվում է հակախորհրդային համառ պրոպագանդ, վորը հիմնված է զրպարտության վրա: Խորհրդային Միությունը պատկերացվում է, վորպես մի պետություն, վորը ձգտում է «կլանել» Մերձբալթյան պետությունները: Մոտավորապես ճիշտ նույն ձևով են պարզաբանում «ԽՍՀՄ հարցը» ամբողջ բնակչությանը:

2320

Պետհրատի տպարան

Գլավլիտ 7472 (բ)
Հրատար. № 2193
Պատվեր 1406
Տիրաժ 3000

ՍՐԲԱԳՐԵՑԻՆ՝ Տ. Տ. ՂԱԶԱՐՅԱՆ ՅԵՎ Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հանձնված է արտադրության 25 ապրիլի 1932 թ. Ա. Ֆ. A.*

*Տպագրված է 14 մայիսի 1932 թ.*

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0225189

42.351

ԳԻՆԸ 40 ԿՈՊ. (3 մ.)

КРАСНОАРМЕЙСКАЯ ПОЛИТУЧЕБА
Военно-политический курс
Глава III

Госиздат ССР Армении
Эривань — 1932